Փաշինյանի հորինած եւ գովազդած «խաղաղության խաչմերուկ» նախագիծը կորցնում է նույնիսկ տեսական կապն իրականության հետ. Ռուսաստանը, Իրանը, Հնդկաստանը, Պակիստանն իրար հետ կապվում են՝ շրջանցելով Հայաստանը: Ռուսաստանը կորցնում է հետաքրքրությունը Հայաստանի նկատմամբ՝ մենք դադարում ենք շահավետ երթուղի լինել:

Կարդացեք՝ էջ 5

Ինքն իրեն Քրիստոսի տեղը դրեց, հետո էլ ասեց՝ Պապ թագավոր, դե, ինքը Պապ թագավորից վատ վախճանի է արժանանալու... Պայքարը Վեհափառի դեմ չէ, եթե Վեհափառի դեմ լիներ, մի քիչ ուրիշ տեսանկյունից կարող էինք նայել: Տեսեք, «Եկեղեցու պատմություն» առարկան հանեց կրթական ծրագրից՝ Վեհափառը կապ ունի՞ դրա հետ՝ չուներ:

Կարդացեք՝ էջ 7

ԱՄՆ-ում դեմոկրատները հաղթեցին հանրապետականներին՝ Նյու Յորքում, Նյու Ջերսիում եւ Վիրջինիայում տեղի ունեցած ընտրություններում: Հիմնական ուշադրությունը սեւեռված էր Նյու Յորքի վրա: Պատճառն այն էր, որ Թրամփը, լինելով հանրապետական, կոչ էր արել քվեարկել դեմոկրատ Էնդրյու Կուոմոյի օգտին, որը պարտվեց:

Կարդացեք՝ էջ 8

Հրապարակ

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 177 (4079), 7 նոյեմբեր, ուրբաթ, 2025

www.hraparak.am

Շուրջ կես տարի է՝ Գյումրու ՔՊ տարածքային կառույցը լուծարվել է, եւ նորը չի ձեւավորվում: ՔՊ տարածքային կառույցի նախկին ղեկավար Կարեն Սարուխանյանը երեկ մեզ ասաց, որ տեղական կառույցի լուծարման դիմումն ինքն անձամբ է ներկայացրել ՔՊ վարչություն՝ այս տարվա մայիսին: Սակայն պատճառների մասին չմանրամասնեց: Կան տեղեկություններ, որ իրականում Սարուխանյանն այնքան էլ սեփական կամքով չի լուծարման դիմում ներկայացրել՝ նրան դա պարտադրել են անել Գյումրու ՏԻՄ ընտրություններից, ՔՊ-ի պարտությունից եւ Վարդան Ղուկասյանի՝ քաղաքապետ դառնալուց հետո: Նախկին կառույցում, ի դեպ, ընդգրկված չէին ներկայիս մարզպետ Դավիթ Առուշանյանը, ՔՊ-ի թեկնածու Սարիկ Մինասյանը: Մեզ ասացին, որ առաջիկայում ՔՊ նոր կառույց կձեւավորվի Գյումրիում, որը, ամենայն հավանականությամբ, կգլխավորի գործող մարզպետը:

Մեզ պատմեցին, որ Վաղարշապատ խոշորացված համայնքի Հայթաղ գյուղի դպրոցի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Վարդան Ասատրյանին օրերս հեռացրել են աշխատանքից: Մեր աղբյուրը պատմեց, որ դպրոցի տնօրենի հարեւաններից մեկն է նրան «մատնել»: Նրան տեսել է ընդդիմության քարոզարշավին մասնակցելիս, նկարել է, նկարներն ուղարկել մարզպետարան, որից հետո «ժողովրդավար» մարզպետ Վահրամ Խաչատրյանն էլ Ասատրյանին անմիջապես ազատել է աշխատանքից եւ նրա փոխարեն տնօրենի ԺՊ նշանակել Էջմիածնից ինչ-որ մի կնոջ, որին դպրոցի կոլեկտիվը չի ճանաչում: Մենք կապ հաստատեցինք Հայթաղի միջնակարգ դպրոցի հետ, որտեղից հաստատեցին մեր տեղեկությունը, որ տնօրենը հեռացվել է, սակայն մանրամասներ չհայտնեցին. համայնքում վախի մթնոլորտ է, տեռոր, հետապնդումներ:



Դանրապետությունում ավարտվել են բուհերի բակալավրիատի հեռակա ուսուցման միասնական քննությունները: Հայաստանի ազգային ագրարային համալսարանին (ներառյալ Վանաձորի ու Սիսիանի մասնաճյուղերը) այս տարի հատկացվել էր 1235 տեղ: Միասնական քննությունների արդյունքում համալրվել է այս տեղերի ընդամենը 3,7 տոկոսը: Խայտառակ արդյունքներ են գրանցվել հատկապես գյուղատնտեսական մասնագիտությունների գծով: 13 մասնագիտություններում ընդունվել է ընդամենը 14 դիմորդ: Երկրի համար կարեւոր մասնագիտությունների գծով ընդունվել է 1-2-ական դիմորդ, կամ ընդհանրապես չեն ընդունվել:

Քաոս եւ ցնծություն

Առաջին հայացքից իրար հետ ոչ մի կապ չունեցող իրողություններ կան, որոնք իրականում ոչ միայն սերտորեն կապված են միմյանց հետ, այլեւ բացահայտում են, թե ինչպիսի խոր քաոսի, կառավարման ճգնաժամի ու ոչ պրոֆեսիոնալիզմի մեջ է թաղվել մեր երկիրը: Ահա՝ տեղեկանում ենք, որ մետրոյում գնացքները կանգ են առել, պաշտոնական բացատրությունը հոսանքի խափանումն է: Կոմիտասի թաղամասում մի հսկա սուպերմարկետ է հրդեհվել՝ կրակը բոցկլտում է, փրկարարները հրդեհ են հանգցնում: Գյումրու քաղաքապետ Վարդան Ղուկասյանի առողջական վիճակը կտրուկ վատացել է՝ կալանավայրից տեղափոխել են հիվանդանոց: Սերժ Սարգսյանի նկատմամբ նոր քրեական գործ են հարուցել, 1 օրվա մեջ 3 տարբեր նիստ արել՝ ՍԷԿՏ-ը փակելու համար: Վաղարշապատում դպրոցի տնօրենը բացեիբաց ընտրակաշառք է բաժանում՝ հօգուտ իշխանական թեկնածուի, եւ հպարտորեն հայտարարում, թե դա իր ՀԿ-ով է անում, միշտ է արել, լավ է անում: 2 օր շարունակ լրատվամիջոցները գրում են այդ մասին, բայց ոչ ոք ընտրակեղծարարի ձեռքը չի բռնում: Մեկ այլ տնօրենի մարզպետը շուտափույթ ազատում է պաշտոնից, քանի որ նա ընդդիմադիր թեկնածուի քարոզարշավին է ներկա գտնվել: Բագրատ սրբազանը դատարանում հերքում է Քննչական կոմիտեի նախագահի նախորդ օրվա սուտ հայտարարությունը, թե մեղադրյալներն իրենց ձեռքով գրել էին, որ ահաբեկչություն են նախապատրաստում: Մայր Աթոռը հերթական կարգազանց քահանային է կարգալույծ անում՝ Եկեղեցու կանոնակարգը խախտելու համար: ՀՀ իշխանություններին մեծ ուրախություն է պատճառել այն, որ ռուսական ցորենը ոչ թե Փոթիից է եկել, այլ Ադրբեջանով մտել է Վրաստան ու հասել Հայաստան: Եվ մեզանում այնպիսի ցնծություն է տիրում, կարծես վերջին 1 ամսում Հայաստանում հաց չէր թխվել, սովալլուկ հայերը վերջապես հաց են ստացել:

Գլխավոր դատախազությունը 2 ամսում 3 քաղաքացիական հայց է ներկայացրել Հակակոռուպցիոն քաղաքացիական դատարան՝ Վեդի խոշորացված համայնքի ղեկավարի՝ ՔՊ-ական Գարիկ Սարգսյանի դեմ: Վերջին հայցը ներկայացվել է հոկտեմբերի 22-ին՝ հողամասերի աճուրդներն ու վարձակալության մրցույթներն անվավեր ճանաչելու եւ անվավերության հետեւանքներ կիրառելու պահանջով, դրանից առաջ էլ երկու քաղհայց էր ներկայացվել՝ օգոստոսի վերջին: Երկու հայցն էլ՝ կրկին աճուրդն անվավեր ճանաչելու եւ անվավերության հետեւանքներ կիրառելու պահանջով: Հայցերը դատավորներ Ռուդոլֆ Ավագյանի, Նարինե Ավագյանի եւ Կարապետ Բաղալյանի վարույթներում են, դատաքննությունը դեռ չի սկսվել: Հայաստանում, որպես կանոն, ՔՊ-ականների ներկայացրած հայցերն արագությամբ քննվում են, իսկ նրանց դեմ ներկայացված հայցերը՝ տարիներով ձգձգվում:

ԹԱԼԻՆՅԻ ՄԱՐԶՊԵՏԸ ԵՎ ԻՐ ԵՂԲԱՅՐԸ

Արագածոտնի նախկին մարզպետ, երբեմնի երդվյալ ՀՀԿ-ական Սարգիս Սահակյանին երեկ հարցրինք՝ ո՞նց եք տրամադրված, որ այս կիրակի էլ անհավատների խմբակը «պղծելու» է Ձեր հայրենի Թալինի եկեղեցին: Երբեմնի ՀՀԿ-ականը, հարցից ահաբեկված, խնդրեց, որ ավելի ուշ զրուցի մեզ հետ: Իսկ հարցին՝ ինքը հայ առաքելական եկեղեցու հետեւո՞ղդ է, դրական պատասխան տվեց՝ ավելացնելով, որ ուրիշ ձեւ չէր կարող լինել, սակայն կտրականապես հրաժարվեց այլ հարցերի պատասխանելուց: Մինչդեռ նախկինում Սարգիս Սահակյանն ու եղբայրը՝ «Հայդուկ» ՀԿ ղեկավար Նաիրի Սահակյանը, կարելի է ասել, թունդ ազգայնականներ էին եւ մասնակցում էին ընդդիմության ակցիաներին: Հիշեցնենք, որ Հովհաննավանքում երկու ֆեյք պատարագից հետո Փաշինյանը հայտարարել է, որ այս կիրակի Թալինում է պատարագի մասնակցելու, որտեղի հոգեւոր հովիվ Թադեւ քահանան անցած կիրակի Հովհաննավանքում էր եւ իր աջակցությունն է հայտնել կարգալույծ Ստեփան Ասատրյանին: Տեղեկություն կա, որ Թալինի համայնքապետ Տավրոս Սափեյանը համարյա արտակարգ դրություն է հայտարարել համայնքում եւ զգուշացրել՝ համայնքապետարանի ենթակայության հիմնարկ-ձեռնարկությունների աշխատակիցները մեկ մարդու պես պետք է ներկայանան պատարագին, ինքն անձամբ է ներկա-բացակա անելու:

ԽԼՈՑԻ

ՀՆԱՐԱՎՈՐ ՉԷ ԱՅՍ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՎ ՀԷՑ-Ը ԳՆԵԼ, ԵԹԵ ՆՈՐ ՎԱՐԿԵՐ ՉՎԵՐՑՆԵՆ

«Հայաստանի էլեկտրական ցանցերի» հետագա ճակատագիրը կախված է Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի որոշումից: Կառավարության երեկվա նիստից հետո լրագրողների հետ հարցուպատասխանի ժամանակ Փաշինյանը ձեւացրել է, թե իրեն անհայտ է ՀԾԿՀ-ի որոշումը, այն քանի դեռ չկա, ինքը չի կարող ասել, թե ՀԷՑ-ի վերաբերյալ իր նախկինում հնչեցրած որ սցենարը կյանքի կկոչվի: Միեւնույն ժամանակ չի թաքցրել, որ կառավարությունը մտադիր է գնել ռուսաստանաբնակ գործարար Սամվել Կարապետյանի սեփականությունը հանդիսացող ՀԷՑ-ը, իսկ գնման գործընթաց հնարավոր է կազմակերպել, երբ ՀԷՑ-ին զրկեն լիցենզիայից. «Եթե ելնենք այն կանխավարկածից, որ հանձնաժողովի որոշումը դա հնարավոր դարձնի, ապա հարց է ծագելու՝ ինչքա՞ն է գինը, գնից է կախված, իսկ գինը պետք է որոշվի համակողմանի վերլուծության արդյունքում: Եթե դա լինի տրամաբանական գին, ես ասել եմ, որ կառավարությունը շատ լրջորեն կքննարկի դա: Եթե շատ մեծ լինի գինը, եւ ակնհայտ լինի, որ պետական բյուջեի միջոցներով մենք չենք կարող այդ ձեռքբերումն իրականացնել, կգնանք երկրորդ սցենարով: Բայց ասում եմ՝ դա հնարավոր կամ անհնար կդառնա Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կայացրած որոշման արդյունքում»: Փաշինյանը նաեւ ասել է, թե երկրորդ սցենարն այն է, որ այն ինչ-որ ձեւով մասնավորեցվում է միջազգային հեղինակություն ունեցող ընկերության կողմից, բայց կառավարությունը որոշակի ներկայություն կունենա, օրենսդրական կարգավորումով, թե բաժնետոմսերի միջոցով՝ դա քննարկվում է: Սա, ըստ էության, նման կլինի այն գործընթացին, որի արդյունքում ԶՊՄԿ-ի, «Լիդիանի» կամ «Վիվա Սելի» բաժնետոմսերը կառավարությունը յուրացրեց՝ «նվեր» ստանալով այդ ընկերություններից:

Հիշեցնենք, որ ամիսներ առաջ Եկեղեցուն պաշտպանելու մասին հայտնի հարցազրույցից եւ Սամվել Կարապետյանի կալանավորումից հետո, հաշված օրերի ընթացքում իշխանությունները նրա ընտանիքին պատկանող ՀԷՑ-ը պետականացնելուն միտված հայտարարություններ արեցին եւ նախագիծ մշակեցին՝ այն խորհրդարանում արտահերթ կարգով ընդունելով: Այս փոփոխությունը հնարավորություն տվեց ՀԷՑ-ի կառավարումը հանձնել ժամանակավոր կառավարչի, իսկ կառավարիչ նշանակվեց ՊՎԾ պետ Ռոմանոս Պետրոսյանը: Չնայած Ստոկհոլմի արբիտրաժային դատարանը միջանկյալ որոշում կայացրեց՝ համարելով, որ կառավարչի նշանակումն ու հետագա գործողություններն ապօրինի են, եւ պետք է կասեցվի գործընթացը, քանի դեռ ՀԾԿՀ-ն չի ավարտել ՀԷՑ-ի վարույթի քննությունը, իսկ վարույթը քննվում է արդեն մի քանի ամիս՝ երկու ժամկետ երկարաձգվել է, երրորդը լրանում է նոյեմբերի 18-ին, եւս մեկ ժամկետ ՀԾԿՀ-ն կարող է երկարաձգել, եւ, ամենայն հավանականությամբ, ՀԷՑ-ը լիցենզիայից զրկելու որոշում կկայացվի, որից հետո պետությունը կամ պետք է ՀԷՑ-ը գնի, կամ Փաշինյանի մատնանշած երկրորդ սցենարով գնա, ինչպես արեց վերը նշված ընկերությունների պարագայում:

ՀԷՑ նախկին տնօրեն **Դավիթ Ղազինյանը** մեզ հետ զրույցում համոզմունք հայտնեց, որ Փաշինյանն իրականում շատ լավ գիտի, որ ՀԾԿՀ-ն ՀԷՑ-ին զրկելու է լիցենզիայից, այդուհանդերձ, գնման գործընթաց, ըստ մեր զրուցակցի, չի կայանալու, որովհետեւ խոսքը չափազանց մեծ գումարի մասին է, որը պետական բյուջեի միջոցներում չկա: «Իրենք շատ լավ գիտեն, որ հնարավոր չէ այս բյուջեով գնել ՀԷՑ-ը, եթե, իհարկե, նորից արտաքին պարտքը շատ մեծ գումարներով չծանրաբեռնեն»,- ասաց Ղազինյանը՝ գումարի չափ չհրապարակելով, միայն ասաց, որ գնի մասին հայտնի կդառնա լիցենզիայից զրկելուց հետո՝ միջազգային անկախ գնահատող ընկերության գնահատականների արդյունքում: «Մեր պնդումն է լինելու, որ գնահատող ընկերությունը լինի միջազգային հեղինակավոր ընկերություն, տեղական ընկերություն չպետք է լինի՝ հայտնի պատճառներով: Գնահատված արժեքին կգումարվի եւս 15 տոկոս՝ գերակա շահի մասին օրենքով»:

Ղազինյանի կարծիքով՝ ՀԷՑ-ը լիցենզիայից զրկելու հիմքերը չափազանց թույլ են, եւ սրանով է պայմանավորված, որ Հանձնաժողովը երեք անգամ երկարաձգել է վարույթի ժամկետը՝ սահմանված մեկական ամսով: Ղազինյանը վստահ է նաեւ, որ ՀԾԿՀ-ն օգտվելու է բացառիկ՝ «3+1» հնարավորությունից ու եւս մեկ ժամկետով էլ կերկարաձգի քննությունը: Լիցենզիայից զրկվելուց հետո գնման գործընթացի համար եռամսյա ժամկետ է սահմանված՝ սեփականատիրոջ հետ բանակցություններ, գնահատման աշխատանքներ եւ այլն: Եթե գնում հնարավոր չէ իրականացնել, ապա պետությունն այլ որոշում պետք է ընդունի. «Օրինակ, կարող է կառավարությունը ձեռք բերել՝ նախապատվության իրավունքով կամ օտարի, բայց սեփականատիրոջ հետ հարցերը լուծելուց հետո»:

Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@hraparak.am



Աղբավայրերը կառավարում են չլիցենզավորված ընկերություններ

Տավուշի մարզպետարանից տեղեկացել եմ, որ մարզում գործում է 25 աղբավայր: Որոշ աղբավայրեր վատթար վիճակում են: Դիլիջան համայնքի աղբավայրը ցանկապատված չէ, այնտեղ հաճախ հրդեհներ են լինում, աղբավայրը պատվում է ծխով: Այդ աղբավայրում կովերն անարգել արածում են՝ սնվելով նաեւ թունավոր նյութերով: Շրջակա միջավայրի նախարարությանը հարցում եմ արել՝ Հայաստանում քանի՞ աղբավայր կա, քանի՞սը որ մարզում, դրանցից քանի՞սն են համապատասխանում բնապահպանության օրենսդրության պահանջներին: Հոկտեմբերի 27-ին շրջակա միջավայրի նախարարության գլխավոր քարտուղար Սերգո Աթանեսյանից պատասխան եմ ստացել, որտեղ նշված է. «Համաձայն Կառավարության 2019 թ. օգոստոսի 8-ի N 992-Ա որոշման՝ Հայաստանի Հանրապետության բնակավայրերում աղբահանության կազմակերպման եւ սանիտարական մաքրման ոլորտում լիազոր մարմինը տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարությունն է: Շրջակա միջավայրի նախարարությունը կոշտ կենցաղային թափոնների տեղադրման կամ թաղման գործունեություն իրականացնելու լիցենզիա եւ լիցենզիայի ներդիր տրամադրել է 4 կազմակերպության՝ Կոտայքի, Գեղարքունիքի, Արարատի եւ Արագածոտնի մարզերում գործունեություն իրականացնելու համար»: Փաստորեն, Հայաստանի մյուս մարզերում եւ Երեւանում կոշտ կենցաղային թափոնների տեղադրումը, թաղումը, աղբավայրերի կառավարումը կատարվում են չլիցենզավորված կազմակերպությունների կողմից: Հետո էլ զարմանում ենք, որ աղբն այրվում է, եւ աղետալի էկոլոգիական վիճակում է մեր երկիրը:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆԻՆ ԹՎՈՒՄ Է, ԹԵ ՊԱՍՏԱՌՆԵՐԸ ԿՇՏԱՆԱԼԻՔ ԵՆ

Վաղարշապատ խոշորացված համայնքում նոյեմբերի 16-ին կայանալիք ընտրությունների նախընտրական քարոզարշավի ամենաբուռն փուլն է այժմ: Ընտրություններին մնաց ուղիղ տասն օր, Վաղարշապատի ընտրությունները Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի դեմ իշխանության հայտարարած պատերազմում, ըստ տարբեր գնահատականների, վճռորոշ են լինելու: Ընտրություններին մասնակցում է 8 քաղաքական ուժ, որոնցից 6-ն ընդդիմադիր են, երկուսը՝ իշխանական: Մասնակիցներից մեկը «Հայրենիք» կուսակցությունն է, որի քաղաքապետի թեկնածուն բանաստեղծ Խաչիկ Մանուկյանն է: Քարոզարշավին ակտիվ մասնակցում է նաեւ «Հայրենիք» կուսակցության անդամ Տաթեւիկ Վիրաբյանը, որը պարբերաբար իր ֆեյսբուքյան էջում հրապարակումներ է անում Վաղարշապատում տեղի ունեցող ապօրինությունների մասին: «Հրապարակը» զրուցել է **Տաթեւ Արցախի** հետ:

- Երբ շրջում եք Վաղարշապատի փողոցներով, զրուցում եք տեղի բնակիչների հետ, ինչ տրամադրությունների եք ականատես լինում: Կան տեսակետներ, որ ընդդիմությունը Վաղարշապատում այնքան էլ ակտիվ չէ, եւ իշխանությունը կարող է հաղթանակ արձանագրել, հատկապես, եթե ինչ-որ ծպտյալ իշխանականներ անցնեն ավագանի եւ միավորվեն ՔՊ-ի հետ:

- Իրականում, ընդդիմությունը բավականին ակտիվ է Վաղարշապատում, բավականին լուրջ քարոզարշավ է իրականացվում, լինում ենք տարբեր թաղամասերում, գրեթե բոլոր համայնքներում, որոնք ներառված են Վաղարշապատի տարածքի մեջ: Եղել ենք, շփվել ենք բնակչության հետ, որոշ համայնքներում շատ ջերմ վերաբերմունքի ենք արժանացել, ջերմ ընդունելության են մարդիկ մեզ արժանացնում, դե, բնականաբար, դա կախված է մեր թեկնածուից՝ Խաչիկ Մանուկյանից. նրան մարդիկ ճանաչում են, ճանաչում են նաեւ նրա բարի համբավը, կարդում են նրա ստեղծագործությունները: Բայց ասեմ, որ ժողովրդի մեջ քիչ չեն նաեւ հիասթափվածները, անտարբերները, ովքեր մեզ հետ զրույցներում ասում են, որ անիմաստ են համարում ընտրություններին մասնակցելը: Շատերն ասում են, որ հոգնել են սպասելուց, որ ամեն անգամ գալիս են, խոստանում են, հույս են տալիս, սակայն ընտրվելուց հետո ոչինչ չեն անում: Մարդկանց մի զանգված մտածում է, որ բոլորը խաբում են իրենց, սակայն Խաչիկ Մանուկյանի հետ ունեցած զրույցներից հետո հայտնում են, որ գնալու են ընտրության, գիտակցում են, որ անտարբերությունը ոչ մի լավ բանի չի հանգեցնի…. ասեմ, որ բոլորն էլ ակտիվ քարոզարշավ են անում, կան բազմաթիվ խախտումներ՝ իշխող թիմի ներկայացուցչի կողմից:

- Ի՞նչ խախտումների մասին է խոսքը:

- Օրինակ՝ պաստառներ են պոկում: Երբ մտնում եք Էջմիածին քաղաք, գովազդային վահանակների վրա բացառապես Մեխակյանի պաստառներն են, բայց պարզ է, որ բոլոր թեկնածուներն էլ ունեն հնարավորություններ եւ կարող էին իրենց պաստառները փակցնել, սակայն ընդդիմության համար տեղ չկա, շարքով Արգիշտի Մեխակյանի պաստառներն են: Տպավորություն է, թե նրանից բացի այլ թեկնածու չկա: Արգիշտի Մեխակյանին թվում է, թե պաստառները կշտանալիք են, բայց ես կասեմ հակառակը՝ վահանակով չեն կշտանում, ամոթ է, մի քիչ էլ ընդդիմադիր թեկնածուների համար տեղ թողեք: Թեպետ մարդիկ այդ վահանակներին ուշադրություն չեն էլ դարձնում, գրեթե բոլորն իրենց խաբված են զգում եւ չեն ուզում ՔՊ-ի անունն անգամ լսել: Հիասթափված մարդկանց աչքի առաջ որքան ուզում ես՝ վահանակ փակցրու, դրանից քո ձայները չեն ավելանալու: Ի դեպ ասեմ, որ մի ամբողջ համայնքում մեր բոլոր պաստառները պատռել են: Վստահ եմ, որ իրենք են կազմակերպել, որովհետեւ բոլորի պաստառները պոկել էին, թողել էին միայն Արգիշտի Մեխակյանի պաստառները: Ես կարծում եմ, որ Գյումրիում տեղի ունեցածը Վաղարշապատում է լինելու, ոչ մի վարչական ռեսուրս չի փրկելու նրանց: Վստահաբար կարող եմ ասել, որ, ըստ իմ շփումների, ՔՊ-ն Էջմիածնում որեւէ շանս չունի:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԵՄ-ԻՑ ՍՏԱՑՎԱԾ ԳՐԱՆՏՈՎ 92-ԻՆ ԹՈՒՐՔԻԱՅԻՑ ՀԱՑԱՀԱՏԻԿ ԳՆԵՑԻՆՔ

«15 վագոնից բաղկացած գնացքը, որը տեղափոխում էր 1,048 տոննա ցորեն, Ռուսաստանից Ադրբեջանի եւ Վրաստանի միջով ուղեւորվել է դեպի Հայաստանի Դալարիկ կայարան, որտեղ նախատեսված է դրա բեռնաթափումը»,- ասված է պաշտոնական հայտարարության մեջ: Հիշեցնենք, որ հոկտեմբերի 21-ին Ղազախստանում Իլհամ Ալիեւը հայտարարել էր, որ Ադրբեջանը վերացրել է Հայաստան բեռների տարանցման սահմանափակումները: Փաշինյանն էլ շնորհակալություն է հայտնել դրա համար: ՀՀ նախկին վարչապետ **Խոսրով Հարությունյանին** հարցրինք՝ 90-ականներին, երբ Հայաստանում կար հացի խնդիր, ինչպե՞ս էր լուծվում հացահատիկի ներմուծման հարցը:

- Արցախը, որտեղից Հայաստանը մեծ քանակությամբ ցորեն էր ստանում, Փաշինյանը հանձնեց, իսկ հիմա ՔՊ-ում մեծ ցնծություն է, որ Ադրբեջանի տարածքով 15 վագոն ցորեն է Հայաստան ներմուծվել: 90-ականներին ինչպե՞ս էր Հայաստան ցորեն ներմուծվում:

- Սկսենք 90-ականներից: Մինչեւ Ադրբեջանի կողմից 1992 թվականի ապրիլի 10-ից սկսած՝ երկաթգծի վերջնական շրջափակումը, այո, բեռները մտնում էին Ռուսաստան, Ադրբեջան, ապա Նախիջեւանով՝ Հայաստան: Երեւանը բեռնափոխադրումների վերջին հանգրվանն էր, դրանից օգտվում էր Ադրբեջանը՝ ճարպկորեն, եւ իր պահանջներն էր ներկայացնում: Օրինակ, ասում էր՝ իքս ապրանքատեսակը կարող ենք բաց թողնել, իգրեկ ապրանքատեսակը՝ ոչ: Իսկ ապրիլի 10-ից հետո վերջնականապես պրոցեսը կանգ առավ: Նախքան այդ, գրեթե բոլոր բեռները Հայաստան մտնում էին Ադրբեջանով: Աբխազական գիծն օգտագործվում էր բացառապես ուղեւորափոխադրումների համար: Երբ ադրբեջանական երթուղին դադարեց գործել Հայաստանի համար, նույն թվականի օգոստոսի 4-ից դադարեց գործել նաեւ աբխազական գիծը, եւ ՀՀ-ն հայտնվեց խոր շրջափակման մեջ: Հայտնվեցինք հացահատիկի լուրջ խնդրի առաջ: Ես վարչապետ եմ նշանակվել 1992-ի օգոստոսի 1-ին: Հայաստանն այդ շրջանում խոր շրջափակման մեջ էր: Միակ տարբերակն ավիացիան էր, սակայն մենք չունեինք բեռնատար ավիացիա: Ուղեւորատար ավիացիայի միջոցով փորձում էինք ինչ-որ բան անել, իրավիճակը փոխել: Հացահատիկի հարցը շատ լուրջ էր: Եղել են պահեր, երբ ընդամենը մի քանի օրվա կամ 1-2 շաբաթվա հացահատկի պաշար ենք ունեցել: Ավելի ավագ սերունդը կհիշի, թե նույն թվականի օգոստոս, սեպտեմբեր ամիսներին ինչպիսի հացի հերթեր էին երկրում: Սարսափելի բան էր: Ամեն ինչ անում էինք, որ խնդիրը լուծեինք: Շատ կարեւոր էր լոգիստիկան: Ունեինք հնարավորություն՝ Թուրքիայի եւ Իրանի հետ համագործակցելու, որովհետեւ Ադրբեջանն ու Վրաստանը փակ էին: Այլ տարբերակ չկար: Ես դիմեցի Իրանի իշխանություններին, որպեսզի մեզ աջակցեն, սակայն ստացա մերժում, քանի որ նշեցին, թե իրենք եւս հացահատիկ ներկրող են: Միակ պետությունը տարածաշրջանում, որն ուներ մեծ պաշարներ եւ լոգիստիկ կապ Հայաստանի հետ՝ Թուրքիան էր: Իմ նախաձեռնությամբ կապ հաստատեցի Թուրքիայի վարչապետի հետ՝ հետեւյալ առաջարկով. քանի որ Հայաստանն ուներ ԵՄ-ից հացահատիկ ձեռք բերելու 37 միլիոն վարկ՝ ԵՄ-ն մեզ նվեր վարկ էր տվել՝ որպես գրանտ, սակայն այն ապրանքայնացնելը մեծ ժամանակ էր պահանջելու, իսկ մենք այդքան ժամանակ չունեինք: Եկանք պայմանավորվածության, որ այն փոխանցում եմ Թուրքիային, այսինքն՝ թուրքերն իրավունք են ստանում այդ գումարը տնօրինել, փոխարենը մենք ստանում ենք հացահատիկ Թուրքիայից: 1992-ի նոյեմբերի 3-ին հացահատիկի առաջին մասը մտավ Ախուրյան, եւ ստիպված անցանք հացի տալոնային համակարգին, որպեսզի բոլորը կարողանան օգտվել հացի այդ համեստ պաշարներից: Կային չարաշահումներ անողներ: Ասենք՝ խոզեր էին պահում, հացն ուզում էին որպես անասնակեր օգտագործել, ինչն այդ փուլում անթույլատրելի էր: Տալոնային համակարգը թեպետ շատերի կողմից քննադատվեց, սակայն դա էր հացի արդարացի, վստահելի ապահովումը: Առաջին պաշարը 100 հազար տոննա ցորեն էր, հետո արդեն ես չէի վարչապետը, հստակ չեմ կարող ասել, թե ինչ եղավ ինձնից հետո: Երբ ես հեռացա, կար 4 ամսվա հացի պաշար, ինչը քիչ չէր:

- Իսկ ի՞նչ կասեք այսօրվա մասին:

- Արցախի Հանրապետության տարածքներից, այո, մենք ահռելի հացահատիկ էինք ստանում: Ընդհանուր առմամբ՝ հացահատիկի պահանջը ԽՍՀՄ տարիներին 1 միլիոն տոննա է եղել մեզ համար, դրանից 500 հազարն օգտագործվել է որպես անասնակեր: Այսինքն՝ կենցաղային նպատակների համար այդքան հաց է օգտագործվել: Բուն հաց արտադրելու համար անհրաժեշտ էր ընդամենը 200 հազար տոննա հացահատիկ, մնացածը ներկրվել է ՌԴ-ից:

- Իսկ հիմա ինչո՞ւ են ուզում բացառել Ռուսաստանից ներկրումը:

- Հացահատիկ, որպես այդպիսին, ավելի ճիշտ է տեղափոխել գնացքով: Լոգիստիկ առումով շատ ավելի մատչելի է նստում: Հայաստան հացահատիկ բերվել է Լարսով՝ ֆուռերով, դա ձեռնտու տարբերակ չէ, հավատացնում եմ՝ լավագույն լուծումը չէ, պարզապես այլ տարբերակ չի եղել:

- Ո՞րն է լավ տարբերակն այդ դեպքում:

- Ադրբեջանի ղեկավարը որոշել է Ադրբեջանի տարածքով թողնել Հայաստանին հասցեագրված ապրանք տեղափոխել: Խոսքը միայն հացահատիկի մասին է, համենայնդեպս, եղավ հարցադրում՝ այլ ապրանքներ բերվելու են Ադրբեջանի տարածքով, թե՞ ոչ, սակայն ոչ մի պատասխան չեղավ: Հացահատիկը մտնում է Ադրբեջան, հետո գնում է Վրաստան, որից հետո՝ Հայաստան: Եվ մեզ ասում են՝ երբ Մեղրիի միջանցքի հարցը լուծվի, այն ժամանակ հացահատիկը Նախիջեւանով կմտնի Հայաստան: Այժմ հարց. մենք ունենք այլ գիծ, Ադրբեջանի հետ հաղորդակցության այլ հնարավորություն: Ռուսաստանից ապրանքը գալիս է Բաքու, Բաքվից՝ Ղազախ, Ղազախից՝ Իջեւան: Այդ գծի մասին ոչ մեկը չի խոսում, եւ այն չեն ուզում աշխատեցնել, ինչո՞ւ: Եղել է սողանք: Խնդիրները լուծելու համար մոտավորապես 17 միլիոն դոլար գումար է հարկավոր: Կառավարությունը փոխանակ Իջեւանով Ադրբեջանի հետ հաղորդակցությունը բացի, մի քանի միլիոն ծախսելով, դրա փոխարեն ուրախանում է, որ Բաքվից ապրանքը գնում է Վրաստան, Վրաստանից էլ՝ Հայաստան: Ասում են, որ սա պատմական նախադեպ է, իսկ ո՞վ ասաց, որ Ալիեւի «պատմական» որոշումները լինելու են շարունակական: Գուցե նա վաղն այլ բան ասի, ինչո՞ւ պետք է կաշկանդվածություն ունենա: Պարզ է, որ այս ամենը ներկայացվում է քաղաքական պատճառներով: Ասում են՝ այ, վերջապես մենք ունեցանք ապաշրջափակում, բայց եթե լիներ պայմանագիր՝ երկու կողմից սահմանված ներպետական կարգով վավերացված եւ միջազգայնորեն ճանաչելի, կարող էին ասել, որ լուրջ կապեր են վերականգնվել, եւ լուրջ առաջընթաց ունենք:

Իշխանությունը ցնծության մեջ է. Ադրբեջանի տարածքով Հայաստան ցորեն է մտել:



Էջը՝ Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ

ԿԻՐԱՆՅՈՒՄ ՄԱՐԴԿԱՆՑ ԱՐԳԵԼԵԼ ԵՆ ՏՆԵՐԻՑ ԴՈՒՐՍ ԳԱԼ՝ ՄՈՏԵՆԱԼ ՓԱՇԻՆՅԱՆԻՆ

ՔՊ խմբակցության պատգամավորները նոյեմբերի 5-ին այցելել են Տավուշի մարզ՝ Կիրանց եւ Ոսկեպար՝ Դիլիջանում ընթացող շինարարական աշխատանքների ընթացքին ծանոթանալու: Բերքաբերում գյուղացիների հետ քննարկել են գյուղատնտեսական աշխատանքների հետ կապված հարցեր: Այցն ավարտել են Իջեւան քաղաքում, որտեղ հետեւել են քաղաքային զբոսայգու վերանորոգման աշխատանքներին: Նրանք Ադրբեջանին հանձնված Կիրանցում, ժպիտը դեմքներին, իրենցից գոհ՝ լուսանկարվել են ու հրապարակել Ֆեյսբուքում: Մինչդեռ կիրանցեցիների սրտից արյուն է կաթում: **Անդրանիկ Նազարյանը**, որը ծնվել եւ մեծացել է Տավուշի սահմանամերձ Կիրանց գյուղում, «Հրապարակի» հետ զրույցում ասում է, որ ՔՊ-ականները՝ Փաշինյանի գլխավորությամբ, Կիրանց ամեն անգամ այցելում են գաղտագողի:

Ըստ մեր զրուցակցի՝ այն պահին, երբ Փաշինյանը գալիս է գյուղ, գյուղացիներին իրավապահներն արգելում են իրենց բակի դարպասներից դուրս գալ, ասում են՝ չի կարելի. «Ես տանը չեմ եղել, բայց երկու իրավապահ, մեկը՝ քաղաքացիական հագուստով, չեն թողել իմ տնեցիներին դուրս գալ տնից, ավելին՝ հրամայել են դարպասներից դուրս չգալ եւ չմոտենալ Նիկոլ Փաշինյանին»: Անդրանիկ Նազարյանը տարակուսում է. ինչո՞ւ էին այդքան երջանիկ ՔՊ-ականները, եւ ինքն էլ իր հարցին պատասխան է տալիս. «Պետական դավաճաններն են ուղղակի: Անամոթաբար խոսում են խաղաղությունից, բայց ի՞նչ խաղաղություն, մեր հողերը զիջելո՞վ: Հայաստանի Հանրապետության հողերն առանց որեւէ կրակոցի հանձնել են Ադրբեջանին: Ես այս մարդկանց արած քայլերը համարում եմ պետական դավաճանություն, այլ բնորոշում տալ ուղղակի չեմ կարող: Իմ հողերը տվել են Ադրբեջանին, առանց իմ կարծիքը հաշվի առնելու, իսկ եթե այս ամենը համարում են խաղաղություն, ապա կարող են առհասարակ ՀՀ պետականությունը վերացնել, մտնել Ադրբեջանի կազմի մեջ, ու վերջ, հաստատ այդպես ավելի լավ կլինի, ավելի խաղաղ կապրենք, այդ պարագայում Ադրբեջանն էլ չի կրակի մեզ վրա.... Սրանց լկտիությունից, ստախոսությունից, անպատկառությունից արդեն նյարդերս տեղի են տալիս: Ինձ համար արդեն սովորական է դարձել սրանց լկտիությունը: Իրենք էլ գիտեն, թե որքան մերժելի են, որքան չսիրված են: Գալիս են Կիրանց, առանց ոչ մեկին տեղեկացնելու, գուցե միայն վարչական ղեկավարներին՝ ես դա չեմ կարող ասել, սակայն մարդիկ այդպես էլ չեն իմանում, թե ոնց եկան, ոնց գնացին: Գալիս են ամեն անգամ, իրավապահներով գյուղը շրջապատում, փակում բոլոր ճանապարհները, մեզ էլ արգելում են տներից, դարպասներից անգամ դուրս գալ: Լավ, ես չեմ հասկանում՝ երկրի ղեկավարը կարո՞ղ է այսքան վախենալ իր ժողովրդից: Արդեն բոլոր հարցերի պատասխանը տալիս է այդ վախը: Ես բառեր չեմ գտնում պարզապես ասելու: Կիրանցեցիների մեծ մասը նույն կարծիքին է մնացել՝ ոչ մի խաղաղություն չկա, չկան նաեւ մեր հողերը: Ապօրինաբար ահռելի տարածքներ են հանձնել Ադրբեջանին՝ ինչ-որ անիմաստ քարտեզների հիման վրա: Մի օր էլ Ալիեւն ինչ-որ մի քարտեզով որոշելու է, որ չկա Հայաստան, եւ ամբողջ Հայաստանն է պահանջելու: Հայկական ԽՍՀ-ն էդքան գլուխ ունե՞ր, որ Մոսկվայի գծած քարտեզներն անտեսեր ու իր համար առանձին քարտեզներ մոգոներ, հա՛, ունե՞ր: Էդ ե՞րբ ենք հասցրել Ադրբեջանից էդքան հողեր վերցնել: Անիմաստ խոսում են: Իրականում՝ պետական դավաճանությամբ են զբաղվում: Վլադիմիր Մովսիսյանն իր բերանով է ասել, թե քանի տասնյակ հեկտար հող է Ադրբեջանը Հայաստանից յուրացրել, փոխանակ այդ մասին խոսեն, փոխանակ մեր շահերն առաջ տանեն, տեսեք, թե ինչերից են խոսում: Եթե մի երկրի ղեկավար իր պետության քարտեզները համարի կեղծ, իսկ Ադրբեջանի քարտեզները՝ բացարձակ ճշմարտություն, լավ, էլ էդ մարդուց ի՞նչ ենք մենք սպասում»:

ՀԱՐՑՈՒՄ

ՓԱՇԻՆՅԱՆԸ ՀՐԱԺԱՐՎՈՒՄ Է III ԿԱՐԳԻ ԵՎ ՎԱՐԱԿՎԱԾ ՑՈՐԵՆԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԻՀ

Ինչպես գրել էինք անցյալ շաբաթ հրապարակված «Ինչ կարգի եւ ինչով վարակված ցորեն է Փաշինյանը ներմուծում Հայաստան» հոդվածում («Հրապարակ», 30.10.2025թ.), համաձայն Ղազախստանի գյուղատնտեսության նախարար Այդարբեկ Սապարովի, 2025 թվականին Ղազախստանում «պահեստավորման համար ստացվող փափուկ ցորենի ծավալի 60%-ը դասակարգվել է որպես երրորդ կարգի, 28%-ը՝ որպես չորրորդ կարգի, իսկ 12%-ը՝ որպես հինգերորդ կարգի եւ դասակարգում չունեցող ցորեն» (բնագրով՝ «Из поступившего на хранение объема мягкой пшеницы к третьему классу отнесено 60%, к четвертому - 28%, к пятому классу и неклассной пшенице отнесены 12% объема»,- сообщил Айдарбек Сапаров, https://eldala.kz/novosti/zerno/23056-zerno-nizkih-klassov-sostavilo-40-urozhaya-v-kazahstane):

III կարգի ցորենը վատագույն ցորենն է, որը թույլատրվում է օգտագործել սննդի արդյունաբերության մեջ, դա էլ՝ այն դեպքում, եթե բուսական սոսնձանյութի (gluten, клейковина, սնձան) պարունակությունը ցորենի մեջ հասնում է գոնե 23%-ի, այլապես ցորենն օգտագործվում է կերարտադրության համար: Այսինքն, Փաշինյանը Ղազախստանից լավագույն դեպքում ներկրում է սննդարդյունաբերության ու կերարտադրության սահմանին գտնվող ցորեն, իսկ գործնականում հնարավոր է՝ ուղղակի կերարտադրության մեջ օգտագործվող ցորեն:

Այդուհանդերձ, Ղազախստանից ներկրվող ցորենի միայն կարգը եւ որակը չեն անհանգստության առարկա, այլ նախ այն, որ, համաձայն գիտական եւ լաբորատոր հետազոտությունների, Ղազախստանում ամառային երաշտին հետեւող հորդառատ անձրեւները հանգեցնում են հասկի մեջ հատիկի ծլման, ինչն ուղեկցվում է կենսաքիմիական ռեակցիաների ամբողջ համալիրով: Ռեակցիաներից մեկը, բառացի մեջբերմամբ, «ալֆա-ամիլազա ֆերմենտի սինթեզման խթանումն է, որը քայքայում է հատիկի օսլան եւ հանգեցնում է Անկման թվի նվազման: Խոնավ հատիկը նաեւ դյուրությամբ վարակվում է սնկային հիվանդություններով, պաթոգեն սնկերն արտադրում են միկո եւ ալֆա տոքսիններ»: Իսկ միկո եւ ալֆա տոքսինները բորբոսասնկային թույներ են, որ ոչ միայն վտանգավոր են մարդկային օրգանիզմի համար, վնասում են ներքին օրգանները, այլեւ կարող են անգամ հանգեցնել մահվան: Միկո տոքսինները ներգործուն են այնքան, որ օգտագործվում են քիմիական զենքերի արտադրության մեջ:

Հոկտեմբերի 30-ի հոդվածում նաեւ գրել էինք, որ հասարակության մեջ խուճապ չառաջացնելու համար բաց աղբյուրներից մեզ հասանելի դարձած գիտական եւ լաբորատոր տեղեկությունները Ղազախստանում երաշտների եւ հորդառատ անձրեւների հերթագայության արդյունքում ցորենի ծլման եւ միկո տոքսիններով թունավորման մասին առայժմ չենք հրապարակում, այլ կփոխանցենք ՀՀ վարչապետի աշխատակազմին:

Նոյեմբերի 3-ին, աշխատանքային օրվա ավարտին, ես դրանք հանձնել եմ վարչապետի աշխատակազմ: Հաջորդ օրը՝ նոյեմբերի 4-ին, վարչապետի աշխատակազմի ներկայացուցչի ստորագրությամբ հավաստումը՝ գրությունը ստանալու մասին, հրապարակել ենք «Սպասում ենք ՀՀ վարչապետի աշխատակազմի պատասխանին» նյութում: Զուգահեռաբար, նույն՝ նոյեմբերի 4-ին հանձնված տեղեկությունների շրջանառումից հետո Փաշինյանի աշխատակազմում, ապա էկոնոմիկայի նախարարությունում ամենահիսկական բրոնյան շարժում է սկսվել՝ Ղազախստանից III կարգի եւ միկո տոքսիններով վարակված ցորենի ներկրման համար պատասխանատվությունից խուսափելու, ղազախական ցորենի գնման գործարքից ձեռքերը լվանալու համար:

Բանը հասել է այնտեղ, որ նախ իմ գրությունը, որով անձամբ Փաշինյանին եւ Արայիկ Հարությունյանին հասցեագրված տեղեկություններ էի փոխանցում վարչապետի աշխատակազմ եւ խնդրում էի պատասխանել երեք լրագրողական հարցի, որոնք արդեն մամուլում հրապարակված էին. ա) ինչ միջոցներ են ձեռնարկվում՝ Ղազախստանից Հայաստան III կարգի եւ միկո տոքսիններով վարակման ենթակա ցորենի ներկրումը կասեցնելու համար, բ) ինչ պատասխանատվության են ենթարկվում անձինք, ովքեր բանակցել են ցորենի գնումն ու ներկրումը, գ) ինչ քաղաքական հետեւանք է սպասվում գյուղատնտեսության ոլորտը վերահսկող նախարարին, որակվել են որպես քաղաքացու դիմում եւ նոյեմբերի 4-ին վերահասցեագրվել էկոնոմիկայի նախարարությանը: Որքան էլ Փաշինյանը ԵՊՀ-ից հեռացված տգետի մեկը լինի, Արայիկ Հարությունյան էլ ութ տողում տասը ուղղագրական սխալ անի, միեւնույն է՝ Փաշինյանի, Հարությունյանի եւ իրենց ենթակաների թուլամտությունը չի կարող հասնել այնտեղ, որ լրագրողական հարցերը քաղաքացու դիմումից չտարբերեն եւ այլ ատյանի վերահասցեագրեն: Լրագրողական հարցերին կարելի է չպատասխանել, բայց ընդունված չէ դրանք այլ ատյանի վերահասցեագրել: Հետեւաբար, պարզից էլ պարզ է, որ Փաշինյանի եւ նրա աշխատակազմի մոտիվացիան եղել է հնարավոր ու անհնար ամեն գնով ձեռքերը լվանալն ու չքմեղանալը, թե իբր իրենք Ղազախստանից III կարգի եւ հնարավոր է՝ միկո տոքսիններով վարակված ցորենի ներկրման հետ կապ չունեն:

Ընդսմին, այս ամբողջ կարճամիտ ֆարսը խաղարկում է այն դեպքում, երբ երկու շաբաթ առաջ Փաշինյանն անձամբ էր հրապարակավ ծնծղաներ զարնել ու «ավետել», թե Ղազախստանից Ադրբեջանի տարածքով ցորեն է ներմուծվում Հայաստան, ինչը նշանակում է ապաշրջափակում, նոր դարաշրջան է բացում, չգիտես էլ ինչ է անում, եւ դրա համար պետք է դափնեպսակ դրվի ՔՊ-ականների գլխին: Թե ինչպես է ապաշրջափակում նշանակում, Աստված գիտի, որովհետեւ Փաշինյանի ազդարարած ցորենը ՀՀ տարածք մուտք է գործելու վրացական երկաթուղով, իսկ թե մինչեւ վրացական երկաթուղուն հասնելը որ երկրների տարածքով է բեռն անցնում, ո՞ւմ է հետաքրքիր: Նաեւ, իմիջիայլոց, որքան շատ երկրների տարածքով է անցնում, այնքան վատ:

Գալով «ապաշրջափակում» հասկացությանը, Հայաստանի սահմաններն ապաշրջափակված կլինեն միայն այն ժամանակ, երբ Կիլիկիայից, Արեւմտյան Հայաստանի տարածքով, ՀՀ Արմավիրի մարզի Մարգարայի անցակետով բեռնափոխադրումներ կիրականացվեն Միջերկրական ծովից Հայաստան: Հատկապես ԱՄՆ-ն, նաեւ ԵՄ-ն այդ ուղղությամբ աշխատում են 2024-ից, TRIPP-ի թեման էլ այդ փաթեթում է, որն իրականում ՀՀ Սյունիքի մարզին առնչվող թուրքերի, ռուսների, ադրբեջանցիների, իրանցիների հաշվարկները հօդս ցնդեցնելու եւ ԱՄՆ ներկայությունը ՀՀ տարածքում ազդարարելու մասին է, ոչ թե ինչ-որ բան կառուցելու: Trump Road երբեք չի կառուցվի, որովհետեւ ո՞չ ԱՄՆ-ին, ո՞չ ԵՄ-ին, ո՞չ Ռուսաստանին, ո՞չ Իրանին հարկավոր չէ, որ Ադրբեջանն Իրանից բացի այլ տարածքով կապ ունենա (կամ առհասարակ կապ ունենա) Նախիջեւանի հետ: Մինչդեռ Կիլիկիա-Հայաստան ցամաքային կապը հատկապես ԱՄՆ-ի, նաեւ ԵՄ-ի համար օրակարգային խնդիր է: Այլ հարց, որ մինչ այն լուծվի, Փաշինյանն ու իր թափթփուկները, հավանաբար, այլեւս իշխանությունում չեն լինի:

Դրա համար էլ Փաշինյանն ամեն ինչ նենգափոխել, կեղծել, աղավաղելու իր սովորական ընթացքով երկու շաբաթ առաջ հրապարակավ «ավետում» ու դափնիներ էր դնում սեփական գլխին՝ Ադրբեջանի տարածքով ղազախական ցորեն փոխադրելու համար: Իսկ հիմա, երբ գիտական եւ լաբորատոր տեղեկությունները ղազախական ցորենի III կարգի եւ միկո տոքսիններով վարակված լինելու մասին հասան իր աշխատակազմ, հրաժարվում, չքմեղանում է, թե ինքն այդ ներմուծման հետ կապ չունի, դա «էկոնոմիկայի նախարարության իրավասությունների շրջանակում է»: Էկոնոմիկայի խեղկատակ նախարարն էլ երկու օր է՝ ղազախական ցորեն- ռուսական ցորեն շուտասելուկներն է մեջտեղ գցել ու այնքան է դատարկախոսում, որ վերջնահաշվում ամեն ինչ լղոզվի, եւ ոչ ոք չհասկանա, թե երբ, որտեղից, ինչ ցորեն է ներմուծվում: Դա էլ քիչ էր, հասցրել է նոյեմբերի 5-ին էլ ինչ-որ հեռուստաալիքի ստուդիա գնալ, հարցազրույց տալ, որպեսզի հայտարարի, թե Ղազախստանից, նաեւ Ռուսաստանից ցորենի ներմուծման հետ ՀՀ իշխանությունը կապ չունի, ներմուծումն իրականացնում է մասնավոր ընկերություն: Նիկոլ Փաշինյանի ընտանեկան «Հայկական ժամանակ» թերթի armtimes.com կայքն էլ համարյա կեսգիշերին՝ 22:54, «Ով է Ադրբեջանի տարածքով Հայաստան հասնող ռուսական եւ ղազախական ցորենի գնորդը. Պապոյանը մանրամասնել է» վերտառությամբ նյութ է հրապարակել, որ մասնավոր գնորդի թեզը գեներացնի: Այսօր էլ կառավարությունում կայացած ճեպազրույցում Փաշինյանն անձամբ է լրագրողների առջեւ «պեչատել», թե ինքը տեղյակ չէ՝ ով է գնորդը, եւ որոնք են գնման պայմանները:

Վարչապետի աշխատակազմին հանձնված ղազախական ցորենի մասին տեղեկություններից հետո բարձրացած այս ողջ բրոնյան շարժումին, հրաժարումներին, չքմեղացումներին տեղյակ լինելով հանդերձ, ի գիտություն Փաշինյանի եւ իր աշխատակազմի, դարձյալ հրապարակավ հայտարարում ենք, որ Հայաստանում պարենային անվտանգության պատասխանատուն կառավարությունն է, հետեւաբար՝ մասնավոր ներմուծողի հանգամանքով թող գլուխ չցավեցնեն: Հինգօրյա ժամկետում սպասում ենք իմ 30.10.2025թ. «Ինչ կարգի եւ ինչով վարակված ցորեն է Փաշինյանը ներմուծում Հայաստան» հոդվածում ձեւակերպված եւ ՀՀ վարչապետի աշխատակազմին ուղղված գրության մեջ կրկնված հարցերի պատասխաններին: Որ ատյանից էլ դրանք ստացվեն, վերագրվելու են վարչապետին եւ իր աշխատակազմին: Պատասխան չստացվելու կամ անբովանդակ պատասխան ստացվելու պարագայում վարչապետի աշխատակազմին հանձնված տեղեկությունները կհրապարակենք:

Որպեսզի որեւէ մեկը չկասկածի ասվածին, ստորեւ հրապարակում ենք մի փոքր հատված այդ տեղեկություններից այն մասին, թե ինչ մեխանիզմով եւ ինչպիսի աղավաղված արդյունքներ են ստացվում ղազախական էլեվատորներում, լաբորատորիաներում եւ այլուր կատարվող ցորենի փորձաքննությունից:

«Պետք է նշել, որ փորձաքննություն իրականացնող միջազգային եւ տեղական խոշոր ընկերությունները հագեցած են համապատասխան միջազգային մակարդակի լաբորատոր սարքավորումներով, համապատասխանում են միջազգային, տարածաշրջանային եւ ազգային հանրապետական չափանիշներին, հավատարմագրված են ինչպես միջազգային, այնպես էլ հանրապետական հավատարմագրման համակարգերում: Այդ ընկերությունների հետ համագործակցությունը նպաստում է արտահանողների համար ռիսկերի նվազեցմանը:

Այս տարի շատ հաճախ են ծագում Անկման թվի որոշման անհամապատասխանություններ: Հացահատիկային պահեստարանների լաբորատորիաները եւ այլոք Անման թիվը որոշելիս մանրացնում են ցորենի անբավարար քանակ՝ մոտ 50 գրամ: Մինչդեռ գոյություն ունեցող բոլոր կանոնակարգերը պահանջում են նվազագույնը 300 գրամ ցորենի մանրացում: Նմուշի նախապատրաստման նման խախտումները հանգեցնում են արդյունքների զգալի աղավաղման»:

Այնպես որ, Ղազախստանի ցորեն արտահանող ընկերությունների կողմից տրամադրվող փորձաքննության արդյունքները կարող են բոլորովին էլ չարտացոլել իրականությունը՝ ցորենի որակի մասին:

Լուսինե
ՊԵՏՐՈՍՅԱՆ
lusine@hraparak.am

ԼԵԱՆՍ

ԱԴՐԲԵՋԱՆՆ ՈՒԺԵՂԱՑՆՈՒՄ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՇՐՋԱՊԱԿՈՒՄԸ՝ ՄԻԱԿՈՂՄԱՆԻ ԿԱԽՎԱԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԳՑԵԼՈՎ ԻՐԵՆԻՑ

Նոյեմբերի 4-ին տեղի ունեցաւ մի քանի իրադարձություն, եւ հնչեցին հայտարարություններ, որոնք առաջին հայացքից իրար հետ որեւէ կապ չունեն, սակայն իրականում փոխլրացում են միմյանց: Ռուսաստանից Վրաստան-Ադրբեջան երթուղով Հայաստան հասավ ցորենով բեռնված առաջին երկաթուղային շարժակազմը: Ադրբեջանը ցույց տվեց, որ ապաշրջափակում է Հայաստանը՝ թույլ տալով, որ իր տարածքն օգտագործվի Ռուսաստանի եւ Հայաստանի միջեւ երկաթուղային կապ ապահովելու համար: Հայաստանը երկաթուղային հասանելիություն ստացավ Ռուսաստանի հետ, բայց նախ այդ հասանելիությունը շատ սահմանափակ է, ինչ-որ իմաստով՝ սիմվոլիկ, քանի որ ամեն նման բեռնափոխադրման համար անհրաժեշտ է Ադրբեջանի իշխանության անհատական թույլտվությունը: Բացի դա, Ադրբեջանը ցանկացած պահի կարող է արգելափակել այդ հասանելիությունը՝ դրանով լծակ ստանալով Հայաստանի նկատմամբ:

ԱՊՀ անդամ երկրների Անվտանգության խորհրդի քարտուղարների հանդիպման ժամանակ Ռուսաստանի անվտանգության խորհրդի քարտուղար Սերգեյ Շոյգուն, անդրադառնալով «Հյուսիս-Հարավ» եւ Զանգեզուրով անցնող ճանապարհներին, ասել էր. «Ես կարծում եմ, որ երկու ճանապարհներն էլ ոչ միայն գոյության իրավունք ունեն, այլեւ անհրաժեշտ են Ադրբեջանը նրա տարածաշրջանների հետ կապելու եւ երկրների միջեւ առեւտրի համար տրանսպորտային միջանցքներ ստեղծելու համար»: Շոյգուն ասել է նաեւ, որ այդ երկու ճանապարհներն իրար մրցակից չեն: Նույն օրը Իրանի ճանապարհների եւ քաղաքաշինության զարգացման նախարարության (MRUD) միջազգային հարաբերությունների բաժնի ղեկավար Ամին Թարֆան հայտարարել էր՝ ռուսական Caspian Service ներդրումային-շինարարական ընկերությունը 2026 թվականի սկզբին կսկսի Ռեշտ-Աստարա երկաթուղու շինարարությունը, որի համար Ռուսաստանը տրամադրել է 1,6 միլիարդ դոլար վարկ: Ռուսաստանը 162 կիլոմետրանոց երկաթուղին դիտարկում է որպես «Հյուսիս-Հարավ» միջազգային տրանսպորտային միջանցքի (ՀՀՄՏՄ)՝ Հնդկական օվկիանոսը Բալթիկ ծովին միացնող խոշոր առեւտրային երթուղու առանցքային օղակ:

Հերթով դիտարկենք, թե ինչ կապ ունեն այս հայտարարություններն իրար հետ: Ռուսաստանը տեւական ժամանակ ուզում էր գործարկել «Հյուսիս-Հարավ» միջազգային տրանսպորտային միջանցքը, որը Ռուսաստանի նավահանգիստները երկաթուղով կկապեր Հնդկական օվկիանոսի հետ: Դրա ամենաօպտիմալ՝ ամենաէժան եւ ամենահեշտ իրագործելի ուղին հետեւյալն էր. Ռուսաստանի երկաթուղին միացած է Ադրբեջանի երկաթուղու հետ, բավարար էր վերականգնել Հայաստանի Մեղրու շրջանով անցնող 42 կիլոմետրանոց երկաթուղու հատվածը, եւ երկաթուղին կհասներ Նախիջեւան, իսկ Նախիջեւանի երկաթուղին էլ իր հերթին կապված է Իրանի երկաթուղու հետ: Այդպիսով Ռուսաստանն Ադրբեջանի եւ Հայաստանի տարածքով երկաթուղային հասանելիություն կստանար Իրանի հետ, իսկ Իրանի տարածքով էլ՝ Պակիստանի եւ Հնդկաստանի: Ինչպես նշեցինք, Ռուսաստանը տեւական ժամանակ փորձում էր իրականացնել «Հյուսիս-Հարավի» հենց այս տարբերակը, քանի որ այս դեպքում պետք էր ընդամենը վերականգնել 42 կիլոմետրանոց երկաթուղու հատված եւ ոչ թե զրոյից կառուցել 162 կիլոմետր, որն ավելի շատ ժամանակ եւ ավելի մեծ ֆինանսական ռեսուրս է պահանջելու: Ադրբեջանը համառորեն դեմ էր այս տարբերակին, որովհետեւ Հայաստանը դառնում էր «Հյուսիս-Հարավ» միջանցքի մասնակից եւ շահառու, մինչդեռ Ռեշտ-Աստարայի կառուցման դեպքում Հայաստանը դուրս է մնում երթուղուց: Շոյգուի հայտարարությունն այն մասին, որ այս երկու նախագծերն իրար մրցակից չեն, նշանակում է, որ ռուսներն ի վերջո համաձայնել են Ադրբեջանի պահանջի հետ՝ դուրս թողնել Հայաստանը նախագծից, կառուցել ավելի թանկ եւ երկար երկաթուղի: Ուշադրություն դարձրեք՝ Շոյգուն ասում է, որ Զանգեզուրով անցնող ճանապարհն ընդամենը օգտագործվելու է Ադրբեջանի տարբեր տարածաշրջաններն իրար կապելու համար, այսինքն՝ չի ունենալու միջազգային կարգավիճակ, դրանով հասկացնելով, որ այն չի դառնալու «Հյուսիս-Հարավ» միջանցքի մաս:

Հայաստանի իշխանության ներկայացուցիչները հրճվանք են բեմականացնում՝ փորձելով հասարակությանը համոզել, որ Ադրբեջանն ապաշրջափակել է Հայաստանը, որ Հայաստանը հասանելիություն է ստացել Ադրբեջանի երկաթուղու նկատմամբ, եւ դա օգոստոսի 8-ին Վաշինգտոնում ստորագրված փաստաթղթի գործողության արդյունքն է՝ խաղաղությունը հասել է Հայաստան: Իրականությունը, սակայն, այն է, որ Ադրբեջանը շարունակում է Հայաստանի շրջափակումը՝ թույլ չտալով, որ Հայաստանը դառնա միջազգային տրանսպորտային միջանցքների մասնակից, Հայաստանին դուրս թողնելով բոլոր հնարավոր տարբերակներից: Ընդհակառակը՝ Ադրբեջանն իր վերահսկողության տակ է վերցնում Հայաստան կատարվող բեռնափոխադրումները, նշանակալի է, որ առաջին հերթին դա արվում է այնպիսի կրիտիկական նշանակության ապրանքատեսակի մատակարարման հարցում, ինչպիսին ցորենն է: Սրանից հետո Ադրբեջանն է որոշելու՝ Հայաստանը ցորեն ստանամ, թե՞ ոչ, վառելիք ստանամ, թե՞ ոչ: Փաշինյանի, Գեւորգ Պապոյանի եւ մյուս ՔՊ-ականների հրճվանքը սրա մասին է:

Փաշինյանի կողմից հորինված եւ գովազդվող «խաղաղության խաչմերուկ» նախագիծը կորցնում է նույնիսկ տեսական կապը իրականության հետ. Ռուսաստանը, Իրանը, Հնդկաստանն ու Պակիստանը իրար հետ կապվում են՝ շրջանցելով Հայաստանը: Ռուսաստանը կորցնում է հետաքրքրությունը Հայաստանի նկատմամբ՝ Հայաստանը դադարում է շահավետ երթուղի լինել ռուսական ապրանքների համար՝ դեպի Իրան եւ հակառակ ուղղությամբ, Ռուսաստանն ունենում է երկաթուղային կապ Իրանի հետ, որի պայմաններում ավտոմոբիլային բեռնափոխադրումը դառնում է ոչ շահավետ եւ անիմաստ: Միակ երկիրը, որ դեռ ինչ-որ կերպ պայքարելու է Հայաստանի վերջնական ոչնչացման ադրբեջանա-թուրքական նախագծի իրականացման դեմ, Իրանն է. հայ-իրանական սահմանը պետք է Իրանին՝ Վրաստան եւ Սեւ ծով հասանելիություն ունենալու համար:

Ավետիս ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏ ՉԻ ԳՈՐԾՈՒՄ, ԳՈՒՅԵ ԷՇՈՎ ՈՒ ՁԻՈ՞Վ ՏԵՂԻՑ ՏԵՂ ԳՆԱՆՔ

Ամեն օր Իջեւան քաղաքի կենտրոնում, ավտոկայարանում կարելի է տեսնել Դիլիջան քաղաք, Դիլիջան համայնքի Հաղարծին, Թեղուտ եւ այլ գյուղեր մեկնողների, ովքեր մոտենում են Իջեւան-Երեւան երթուղու միկրոավտոբուսների վարորդներին եւ հարցնում՝ կարո՞ղ են Երեւան մեկնող միկրոավտոբուսում նստել: Երեւանցի վարորդը նրանց պատասխանում է, որ երբ Երեւան մեկնողները՝ բոլորը տեղավորվեն, իրենք եւս կարող են տեղավորվել: Լինում են դեպքեր, երբ Իջեւանից Դիլիջան քաղաք, Հովք, Հաղարծին, Թեղուտ մեկնողները ստիպված են լինում մի քանի տասնյակ կիլոմետր ճանապարհ անցնել միկրոավտոբուսում կանգնած: Հաճախ Դիլիջան, Դիլիջանի գյուղեր մեկնողները կանայք են լինում, Երեւան մեկնողներն ընկնում են անհարմար դրության մեջ, ոմանք, բարեկրթությունից դրդված, հասարակական տրանսպորտում իրենց տեղը զիջում են գյուղեր մեկնող, ոտքի վրա մնացած կանանց: Բազում տարիներ չեն գործում Իջեւան-Դիլիջան, Իջեւան-Բերդ, Իջեւան-Նոյեմբերյան միկրոավտոբուսային երթուղիները: Սեփական ավտոմեքենա չունեցողները ստիպված են օգտվել տաքսիներից, սակայն սոցիալապես անապահով շատերը տաքսու փող չունեն:

2021թ. ապրիլի 8-ից որպես Տավուշի մարզպետ պաշտոնավարող Հայկ Ղալումյանը վերջին տարիներին բազմիցս նշել է, որ Տավուշի մարզում կգործարկվի միասնական երթուղային ցանց, կբարելավվի տրանսպորտային փոխադրումների վիճակը: Անցյալ տարի՝ 2024-ին, Տավուշի մարզպետ Ղալումյանին տեղեկատվական հարցում էի ուղարկել, թե 2024 թվականին Տավուշի մարզում միասնական երթուղային ցանցի ներդրման համար ինչ աշխատանքներ են նախատեսված: Մարզպետարանից պատասխանել էին. «ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարությունը 2024 թվականի ընթացքում նախատեսում է հայտարարել Տավուշի միջմարզային եւ ներմարզային միասնական երթուղային ցանցերը սպասարկող կազմակերպությունների ընտրության մրցույթներ, որի շրջանակներում ամբողջությամբ կապահովվի՝ ա) Իջեւան-Երեւան, Իջեւան-Վանաձոր, Դիլիջան-Երեւան, Դիլիջան-Վանաձոր, Նոյեմբերյան-Երեւան, Նոյեմբերյան-Վանաձոր, Բեր-Երեւան, Բերդ-Վանաձոր միջմարզային երթուղիների կանոնավոր սպասարկումը»:

Ներկայում Երեւանի հետ Իջեւան, Նոյեմբերյան, Բերդ համայնքների տրանսպորտային կապի առումով խնդիրներ չկան, նախկինում գործել ու այժմ էլ անխափան գործում են Իջեւան-Երեւան, Նոյեմբերյան-Երեւան, Դիլիջան-Երեւան եւ հակառակ ուղղություններով միկրոավտոբուսային երթուղիներ: Բերդ-Երեւան եւ հակառակ ուղղությամբ հասարակական տրանսպորտ՝ միկրոավտոբուս կամ ավտոբուս չի գործում, սակայն այդ երթուղում ակտիվ աշխատում են տաքսի ավտոմեքենաները: Տավուշի մարզի ձեւավորումից 29 տարի է անցել, սակայն մարզի համայնքները մարզկենտրոն Իջեւանին կապող հասարակական տրանսպորտի երթուղիներ մինչ օրս չեն գործում: Այս տարի մարզպետ Հ. Ղալումյանին կրկին հարցում եմ արել, թե վերջապես երբ մարզում կգործարկվի իր խոստացած միասնական երթուղային ցանցը: Մարզպետարանից պատասխանել են. «Միասնական երթուղային ցանցը ստեղծվում է ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության կողմից»:

Տավուշի մարզպետի աշխատակազմը ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության տարածքային ստորաբաժանումն է, մարզպետն ինչո՞ւ տեղյակ չէ, թե երբ կգործարկվի այդ ցանցը: Ինչ է՝ նախարար Դավիթ Խուդաթյա՞նը պետք է այն ստեղծի, թե՞ Երեւանում գտնվող նախարարության աշխատակազմը: Իսկ ինչո՞վ է զբաղված մարզպետարանը, եթե նման հարցեր էլ չի կարողանում լուծել: Եվ, առհասարակ, այդ երթուղին մի օր կգործարկվի՞, թե՞ ոչ:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱԾՎԵՑ ԵՐԿԸՆՏՐԱՆՔԻ՝ ՇԱՐՈՒՆԱԿԵ՞Լ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՈՒՂԻՆ, ԹԵ՞Ի ՎԵՐԱԾՆԵԼ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳԸ

Սկիզբը՝ նախորդ համարում

2014թ. խորհրդարանական ընտրություններին սոցիալիստ Իգոր Դոդոնը քարոզչությունն անցկացրեց ծայրահեղ ազատականության քննադատության, «Եվրոպան քանդում է ընտանիքը» կարգախոսի ներքո: Ճիշտ է, եվրոպամետ ուժերը պահպանեցին իշխանությունը, սակայն տնտեսական ճգնաժամի եւ վարչապետ Վլադիմիր Ֆիլատի հետ առնչվող ֆինանսական սկանդալների պատճառով նրանց հեղինակությունը կտրուկ անկում ապրեց: Ի հակակշիռ դրա՝ ամրացան ԵԱՏՄ

հայտ քարոզում էր Դոդոնի օգտին եւ, առհասարակ, ինքնադրսեւորվեց որպես քարոզչական պայքարի գլխավոր գործոն: Եկեղեցական քարոզիչների հիմնական թիրախը Սանդուն էր, նրան մեղադրում էին ընտանիքի ավանդական գաղափարներն այլասերելու մեջ: Եկեղեցու ներսում, սակայն, մի փոքր, բայց կարեւոր շրջանակ սկսեց քննարկել Եկեղեցու քաղաքականացման վտանգները:

2019թ. խորհրդարանական ընտրություններում Մ. Սանդուն եւ Ի. Դոդոնը միասին հանդես եկան ընդդեմ ամենաազդեցիկ մեծահարուստ Վլադ Պլահոտնյուկի, որն այդ շրջանում բռի մեջ էր պահում կառավարությունն ու խորհրդարանական մեծամասնությունը: Սանդու-Դոդոն անսովոր եւ կարճատեւ դաշինքի հաղթանակը վերացրեց իշխանական համակարգում հաստատված մենաշնորհը, եւ պարտված Պլահոտնյուկը հեռացավ երկրից:

Եկեղեցին փորձեց դիրքավորվել որպես ավանդական կարգին ապավինող միասնական մարմին, սակայն սոցիալիստներին սատարող ՄՔՄ-ի հոգեւորականների ձայնն առավել լսելի էր: Միասեռական ամուսնության օրինականացման, ավանդական ընտանիքը խաթարող կրթական ծրագրերի դեմ քարոզում էր Դոդոնի օգտին եւ, առհասարակ, ինքնադրսեւորվեց որպես քարոզչական պայքարի գլխավոր գործոն: Եկեղեցական քարոզիչների հիմնական թիրախը Սանդուն էր, նրան մեղադրում էին ընտանիքի ավանդական գաղափարներն այլասերելու մեջ: Եկեղեցու ներսում, սակայն, մի փոքր, բայց կարեւոր շրջանակ սկսեց քննարկել Եկեղեցու քաղաքականացման վտանգները:

2019թ. խորհրդարանական ընտրություններում Մ. Սանդուն եւ Ի. Դոդոնը միասին հանդես եկան ընդդեմ ամենաազդեցիկ մեծահարուստ Վլադ Պլահոտնյուկի, որն այդ շրջանում բռի մեջ էր պահում կառավարությունն ու խորհրդարանական մեծամասնությունը: Սանդու-Դոդոն անսովոր եւ կարճատեւ դաշինքի հաղթանակը վերացրեց իշխանական համակարգում հաստատված մենաշնորհը, եւ պարտված Պլահոտնյուկը հեռացավ երկրից:

Եկեղեցին փորձեց դիրքավորվել որպես ավանդական կարգին ապավինող միասնական մարմին, սակայն սոցիալիստներին սատարող ՄՔՄ-ի հոգեւորականների ձայնն առավել լսելի էր: Միասեռական ամուսնության օրինականացման, ավանդական ընտանիքը խաթարող կրթական ծրագրերի դեմ քարոզող ՄՔՄ-ն դարձավ քաղաքական խոսքի առաջատար: «Բեսարաբիայի մետրոպոլությունն» (ԲՄ), իր հերթին, աջակցում էր քաղաքացիական հասարակության այն հատվածներին, որոնց համոզմամբ, եվրոպական մոդելը չի բացառում ազգային ինքնությունը, այլ կարող է ամրապնդել այն իրավական եւ մշակութային կառույցների միջոցով: Երկու եկեղեցին էլ ցույց տվեցին, որ իրենք լոկ բարոյական քարոզ չեն անում, այլ ունակ են օրակարգ թելադրել կուսակցական ընտրապայքարում:

2020թ. նախագահական ընտրություններում կրկին մրցակցում էին Դոդոնը եւ Սանդուն: Սակայն այս անգամ քաղաքական, սոցիալական եւ բարոյական մթնոլորտն այլ էր. Սանդուն արդեն ուներ պետական համակարգի վերաձեւման սեփական ծրագրային կուրսը, իսկ հասարակությունում աճել էր կոռուպցիայի դեմ պայքարի պահանջը:

ՄՔՄ-ն ավանդաբար Դոդոնի թիկունքին էր, բայց այս անգամ քարոզչության ձեւաչափը ճակատայինից փոխվեց անուղղակի, հաճախ՝ քողարկված «քաղաքակրթական ընտրության» լեզվի, որովհետեւ փոխվել էին հասարակական տրամադրությունները, եւ չօգնեցին անգամ որպես «հասարակության բարոյական ինքնապաշտպանության» նպատակով, իրականում՝ Սանդուի դեմ անցկացված աղոթքի տպավորիչ երթերը: Սանդուն հաղթեց պարզ կարգախոսով՝ «Մաքրել երկիրը»: Իսկ ՄՔՄ-ն կրեց նշանակալի պարտություն, որը ստիպեց նրան վերաիմաստավորել քաղաքական պայքարի մեթոդները:

2021թ. արտահերթ խորհրդարանական ընտրություններում մանդատների բացարձակ մեծամասնությունը բաժին հասավ մի քանի ամիս առաջ նախագահ ընտրված Սանդուի հիմնած «Գործողություն եւ համերաշխություն» եվրոպամետ կուսակցությանը (PAS): Նախորդ նախագահ Դոդոնի Սոցիալիստների կուսակցությունը կորցրեց վերջին տարիներին երկրի քաղաքական օրակարգում զբաղեցրած կենտրոնական դիրքը, քանի որ հասարակության մի ստվար մասը հոգնել էր իշխանության արագ փոփոխություններից, «հավերժական փոխզիջումներից» եւ, անտարակույս, կոռուպցիայից:

Ռուս ուղղափառ եկեղեցուն ենթակա ՄՔՄ-ն քարոզարշավի ընթացքում քննադատում էր Սանդուի ծրագրերը ընտանիքի, լեզվի, կրթության, մշակույթի հարցերում, կոշտ քննադատության էր ենթարկում նրան՝ որպես արեւմտյան հոռի ազդեցությունների կրողի: ԲՄ-ն, ընդհակառակը, պաշտպանեց Սանդուի իշխանության քաղաքական ուղեգիծը՝ հանրային երկխոսության շեշտադրումով, մերժեց հայհոյանքի ու վիրավորանքի լեզուն, կոչ արեց լինել չափավոր: Դրանով ԲՄ-ն թուլացրեց ուղղափառ դաշտի քաղաքականացման միտումները եւ նվաճեց իր հանդեպ հասարակական վստահություն:

2024 թ. հերթական նախագահական ընտրությունները ընթացան հիրավի արժեհամակարգերի բախման միջավայրում: Բայց կշեռքի նժարը թեքվել էր Սանդուի կողմը. Մոլդովան արդեն ԵՄ անդամակցության բանակցություններ վարող երկիր էր, մայրաքաղաքը՝ երիտասարդացած, կրթված, աշխարհականացած՝ միջին խավն ընտրեց եվրոպական ընթացքի շարունակման ճանապարհը: Անշուշտ, մարզերում դեռ ուժեղ է ավանդույթին ու սահմանված կարգին հավատարիմ «հող պահող մարդու» արժեքային գիծը, որտեղ Եկեղեցին շարունակում է լինել ինքնության հիմնասյունը, եւ ընտրություններում Եկեղեցին ոչ այնքան քարոզում էր, որքան հիշեցնում՝ «Որտեղ լեզուն է, այնտեղ էլ՝ ժողովրդի հիշողությունը»: Սանդուի եվրաուղին բախվեց ՄՔՄ-ի հսկայական հակաքարոզչությանը: Քաղաքական դաշտում բաժանարար գիծն անցնում էր ոչ թե կուսակցությունների միջեւ, այլ այնտեղ, թե «ո՞ր եկեղեցում ես մկրտվել»: Սա ինքնության պատերազմ էր:

Մրցակցության առանցքը տեղափոխվեց ճշմարիտ ինքնության, եվրոպական արդիականացման եւ հոգեւոր անվտանգության միջեւ հավասարակշռության որոնումների դաշտ, ուստի Եկեղեցին փորձեց վերադառնալ հասարակության բարոյական մերանի դերին՝ քաղաքական հայտարարությունների փոխարեն կարդալով ավանդական ընտանիքի եւ սոցիալական այլ արժեքների պաշտպանության քարոզներ:

2025 թ. հերթական խորհրդարանական ընտրություններին երկիրը մոտեցավ բեւեռացված եւ հոգնած: Սանդուի PAS-ն իշխանության ղեկին էր, իսկ սոցիալիստների ճամբարը փորձում էր ազգային պետության գաղափարով վերագտնել ընտրողների ձայները: Քվեարկությունը վերածվեց երկընտրանքի՝ շարունակել եվրոպական ուղի՞ն, թե՞ վերածնել ավանդական օրակարգը: Սանդուն հաղթեց նաեւ շնորհիվ եվրոպական ուղու հավասարակշռված ջատագովության, նախորդ շրջանի ռոմանտիկ շեշտադրումներից զերծ իրատեսական հռետորաբանության, մինչդեռ սոցիալիստները մնացին ընդդիմադիր հին հռետորաբանության թակարդում՝ չառաջարկելով կառուցողական որեւէ հստակ ծրագիր:

Այս ընտրություններում Մոլդովայի ուղղափառ եկեղեցիները կրկին հանդես եկան որպես աշխարհայացքային բեւեռներ. ՄՔՄ-ն՝ ինքնության, ավանդույթի եւ Ռուսաստանի հետ պատմական կապերի պաշտպան, ռումինական ենթակայության ԲՄ-ն՝ իբրեւ եվրոպական եկեղեցական-մշակութային տարածքի եւ ժառանգության կողմնակից: Շարունակվող երկվության պայմաններում ընտրությանը մասնակցելը երկուսի համար էլ պայքար է հանուն արժեքների: Միմյանցից բաժան մետրոպոլիաների տարաձայնությունները մոլդովական ինքնության քարացած խորհրդանիշներն են դարձել:

ՎԵՐՋԱԲԱՆ

Մոլդովայի անկախության շրջանի պատմությունը պտտվում է նույն առանցքի շուրջ՝ ինքնության որոնում եւ պետականության վերահիմաստավորում: Ընտրական պարբերաշրջաններին համընթաց փոփոխվող քաղաքական դաշինքները, Մոսկվայի եւ Եվրոպայի միջեւ խարխափումներն այնպես են փոխկապակցվել ներքին սոցալական ու հոգեբանական հորիզոններին, որ քաղաքական պայքարը մշտապես ուղեկցվում է արժեքային ընտրության հարցադրումներով՝ «Ո՞վ ենք մենք», «Ո՞ւմ հետ ենք մենք», «Ինչպիսի՞ն պետք է լինի մեր պետությունը»: Այս ճանապարհին Մոլդովայի ուղղափառ եկեղեցին շարունակ փորձել է պահպանել միասնական մշակութային դաշտի, ավանդական ինքնության եւ հանրային դիմադրողականության բանալին: Երբեմն նա եղել է ազդեցիկ դերակատար, երբեմն՝ զուսպ եւ երկմտող, սակայն միշտ մնացել է հասարակական զգայուն մթնոլորտի անբաժանելի մասը: Եկեղեցու հեղինակությունը դեռ պահպանվում է հատկապես գյուղական վայրերում եւ ավագ սերնդի շրջանում, ներգործում նրանց քաղաքական նախընտրությունների վրա:

Մոլդովան այսօր կանգնած է նույն հարթության վրա՝ պետական ինքնության ամրապնդում, արդյունավետ կառավարում, պառակտման վերացում: Բայց եւ ակնհայտ է, որ հասարակությունը հասունացել է, կուտակել բավականաչափ փորձառություն, եւ հուսով ենք, որ ապագա անխուսափելի ճգնաժամերին հանրային դիսկուրսը կլինի հասուն եւ արդյունավետ, ու մարդիկ կգտնեն ոչ միայն «Ո՞ւմ ընտրել»-ու, այլեւ «Ինչպե՞ս միասին ապրել»-ու պատասխանը:

Արա ՍԱՀԱԿՅԱՆ

ՄԵԿ ՏԱՐԻ ԱՌԱՋ ԵՄ ԱՍԵԼ՝ ԵԿԵՂԵՑՈՒ ԴԵՄ ՔԱՅԼԵՐԸ ՍԿՍԵԼ Է, ՈՐ ՍՅՈՒՆԻՔԸ ՀԱՆՁՆԻ, ՈՐԻՑ ՀԵՏՈ ԻՐ ԱՎԱՐՏԸ ԼԱՎ ՉԻ ԼԻՆԵԼՈՒ

*«Հրապարակի» զրուցակիցն է Գորիսի տարածաշրջանի հոգեւոր հովիվ **Տեր Ահարոն քահանա Մելքումյանն** է:*

- Սկզբում սրբազաններին, հետո Վեհափառ հայրապետի 68-ամյա եղբորը կալանավորեցին: Մոտենում են Վեհափառին...

- Մենք պիտի սրա արարքի հիմքը տեսնենք իր՝ իշխանության գալու մեջ: Նա եկավ իշխանության մայիսի 8-ին՝ մեր հաղթանակների օրը: Ինչ էր ասում, ասում էր՝ հպարտ քաղաքացի, ձեռքերդ վեր: «Հպարտություն»-ից որ «հ» տառը հանում ենք, մնում է «պարտություն»-ը: Մեր սուրբերը հպարտությանն ասում էին հրեշտակի պարտություն, որովհետեւ առաջին հպարտը սատանան էր: Սեւ ծիսակարգ էր՝ ասում էր՝ պարտված քաղաքացի, ես քո հաղթանակները տանում եմ պարտության: Հետո եթե մենք նայում ենք՝ Շուշին ճրբ ինքը հանձնեց՝ թուրքի դրոշի օրը, Քարվաճառը հանձնեց Մոնթեի ծննդյան օրը, կապիտուլյացիոն փաստաթուղթը ստորագրեց Արցախի հանրաքվեի օրը, ինքը Սյունիք եկավ՝ մենք ճանապարհ էինք փակել՝ Նժդեհի մահվան օրը: Հետո սկսեցին «Նոր Հայաստան-նոր հայրապետ» շարժումը՝ հարձակումը Եկեղեցու դեմ, դրանից հետո եղավ Արցախյան պատերազմ: Չճք նկատում, որ հող է նախապատրաստում Սյունիքի համար: Ես այս սիմվոլիկան իզուր չեմ մեջբերում, որ ինքը Սյունիք էր եկել Նժդեհի մահվան օրը:

- Ուզում եք ասել՝ Վեհափառի դեմ այս շարժումը Սյունիքը հանձնելու գործընթացին նախորդող քայլ է:

- Աստծո բարկությունն է գրգռում: Ինքն իրեն Քրիստոսի տեղը դրեց, հետո էլ ասեց՝ Պապ թագավոր, դե, ինքը Պապ թագավորից վատ վախճանի է արժանանալու, փաստացի ինքն Աստծո դերն է ստանձնել՝ ուզում է ինչ-որ բան անի: Պայքարը Վեհափառի դեմ չէ, եթե Վեհափառի դեմ լիներ, մի քիչ ուրիշ տեսանկյունից կարող էինք նայել: Տեսեք, «Եկեղեցու պատմություն» առարկան հանեց կրթական ծրագրից. Վեհափառը կապ ունճր դրա հետ՝ չուներ, «Հայոց պատմությունը» փոխեց «Հայաստանի պատմության»: Այն անանուն նախկինը, որ ասեց, որ ավելի ուժեղ ուժերի են պարտվել, նա ուղղակի մի բան ասեց, որ Հայաստանը տրված է արտաքին կառավարման, Հայաստանն արտաքին կառավարիչներն են կառավարում: Սա Հայաստանի Հանրապետության երրորդ ինչ-որ մեկն է հայտարարել:

- Նկատի ունեք Սերժ Սարգսյանին:

- Ես անուններ տալիս եմ գիտճք, թե որ դեպքում, այն մարդկանց անուններն եմ տալիս, ովքեր անուն ունեն, անանուն մարդկանց անուններ ես չեմ տալիս: Օրինակ, Մանթաշյան անունը կարող եմ տալ, որ մեծ գործ է արել, Վարդան Մամիկոնյանի անունը կարող եմ տալ, որ հայապահպան գործ է արել, Նժդեհի անունը կարող եմ տալ: Անանուն մարդկանց անունը պետք չէ տալ: Այս պայքարը Վեհափառի շուրջ, այդ օղակն ինքը սեղմում է, բարեկամներին է ձերբակալում եւ այլն, եւ այլն, անգամ իրենց սատելիտների միջոցով ինձ են ասել, որ ինձ էլ կձերբակալեն: Այս պայքարն ուղղակի Եկեղեցու դեմ է, որովհետեւ ինքը բանվոր է՝ արտաքին ուժերի դրածո է, այնտեղից ինչ ասում են, ինքն անում է: Մի բան հիշեցի՝ մի երկրի ղեկավարի սատանան տանում է շղթայակապ, մեր սուրբերից մեկը տեսնում է, ասում է՝ այս ոիր ես տանում, սատանան էլ ասում է՝ արդեն իմն է: Ասում է՝ ուրեմն մեր նախարարներն ազատ են, ասում է՝ ոչ, սա ինչ ասի, նրանք կանեն: Հիմա որ մենք հասկանանք, թե մեր երկրի կառավարումն ինչպես է իրականացվում՝ սատանան սրան բերել է, դրել է, շղթայակապել է, սա ինչ ասում է, նրանք անում են: Արդյունքում բոլորը մեր հայրենիքի դեմ են գործում: Այս ընտրությունները որ պիտի լինեն, այդ նույն արտաքին կառավարիչները փորձելու են սրան վերարտադրել, որ սա Սյունիքի հարցը լուծի: Սրանից մեկ տարի առաջ ես ասել եմ՝ Եկեղեցի-Սյունիք, Եկեղեցու դեմ քայլերը սկսել է, որ Սյունիքը հանձնի, որից հետո իր ավարտը լավ չի լինելու: Այսինքն, այստեղ Վեհափառն այդքան էլ կապ չունի, ուղղակի փորձում են ամեն ինչ անել, որ թողնի գնա: Կաթողիկոսը բանտում էլ լինի, կաթողիկոս է, տիեզերքում էլ լինի, կաթողիկոս է: Որտեղ էլ լինի, կաթողիկոս է, իրեն ոչինչ չեն կարող անել, դրա համար էլ կողքիններին ճնշում են, որ ինքն այդ ճնշումներին ենթարկվի՝ դուրս գա:

- Իսկ կենթարկվի՞ ճնշումներին:

- Ես իրեն իմանալով կասեմ՝ ոչ, անիմաստ մի տանջվեք, ձեր դժոխքի հատակը շատ ավելի մի խորացրեք:

- Կարգալույծ Ստեփան Ասատրյան, Տեր Թադե, Տեր Տարոն, ովքեր կարգալույծի հետ պատարագ են անցկացնում Փաշինյանի համար: Կարո՞ղ է պարզվել, որ նման մարդկանց թիվը եկեղեցում շատ է:

- Ըստ օդում կախված լուրերի, ինչպես հայտնի սրբապիղծն էր ասում, ինքը տառապում է 30 հոգեւորականի գնելու համար՝ 30 արծաթի խորհրդանիշով: Օդից կախված լուրերով, որ այս հրեշի հիմնադրամից 500 հազար դոլար գումար է փոխանցվել այդ Ասատրյանին, անունը դրել են Օհանավանքը վերանորոգելու համար: Այսինքն, ֆինանսական բավականին մեծ աշխատանք են տարել: Մեկ ուրիշ տեղից էլ լսել եմ՝ նորից օդից կախված լուրերով, որ 5 միլիարդ դրամ են ներդրել, որ այդ հոգեւորականներին գնեն: Ես չեմ զարմանա, եթե գնեն, որովհետեւ Հիսուսի հետ էլ էին շրջում 12 հոգի, մեկը մատնեց, դավաճանեց: Մատնիչներ ամեն տեղ կան՝ թե՛ ձեր հիմնարկությունում, եթե՛ մեզ մոտ: Պարզապես եթե նպաստավոր պայմաններ ստեղծվեն, որ իրենք գլուխ բարձրացնեն. նպաստավոր պայման չկա՝ չեն երեւում:

- Լուրեր են պտտվում, որ հաջորդ թիրախները Սյունիքի եւ Գուգարաց թեմի առաջնորդներն են:

- Գուգարաց թեմի առաջնորդը շատ բացճակատ խոսում է, Սյունյաց թեմի առաջնորդն էլ սուսուփուս չէ, ամեն ինչ էլ կարող է լինել: Այդտեղ սրբազանների հարցը չէ, իրենք մատնացույց են անում թերությունները, եթե մեկին ուզում ես կործանել, դու անընդհատ իր թերություններն ես մատնացույց անում, եթե մեկին ուզում ես օգնել, դու անընդհատ իր առավելություններն ես ցույց տալիս, որ բարձրացնես: Հիմա սրանք թերությունն են ցույց տալիս: Դա խոսում է այն մասին, որ Եկեղեցու դեմ է պատերազմը՝ թիրախավորելով հոգեւորականներին:

- Հաջողության կհասնճ՞ն:

- Պապ թագավորն էլ փորձեց ինչ-որ բան անել՝ հաղթանակճ: Եկեղեցու գլխին Քրիստոսն է, Սուրբ Գրքում ասվում է, ով որ կպնի՝ պիտի փշրվի, իրենք կպել են՝ փշրվելու են, հաղթանակ չկա այդ հարցում: Իրենք ուզում են Եկեղեցին հեղինակազրկել, նկատճ՞լ եք՝ Փաշազադեն այնտեղ խոսում է, սա երկու օր հետո սկսում է գործել: Ալիեւն ասում է Գյոկչա՝ սրանք պաշտպանում են դա: Իրենք հայի, հայկականության, հայի գենի հետ կապ չունեն. հայ մարդը կասճ՞՝ թող թուրքը գա կոտորի, միայն նախկինները չգան: Չի ասի հայ մարդը, ցեղասպանություն տեսած հայ ազգի ներկայացուցիչը չի ասի նման բան: Նման բան ասողները, անողները խառնածիններ են:

Հայկա ԱԼՈՅԱՆ

ԲԱԲՎՈՒՄ ԱՂՈԹՈՒՄ ԵՆ, ՈՐ ՓԱՇԻՆՅԱՆԸ «ՀԱՂԹԻ»

Նոյեմբերի 3-ին վարչապետ Նիկոլ Փաշինյանը հայտարարեց ՔՊ կուսակցության համամասնական ցուցակով եւս մեկ ժամկետով առաջադրվելու իր մտադրության մասին: Ընտրությունները, հիշեցնենք, 2026 թ. հունիսի 7-ին են: Փաշինյանի «ավետիսը», բնականաբար, չի վրիպել ադրբեջանական հանրության տեսադաշտից: Ադրբեջանցի քաղաքագետ, Հարավային Կովկասի ուսումնասիրությունների կենտրոնի ղեկավար Ֆարհադ Մամեդովը, որը վերջերս քաղհասարակության պատվիրակության կազմում ժամանել էր Երեւան, իշխանամերձ «Մինվալ Պոլիտիկա»-ի հետ զրույցում նշել է, որ Փաշինյանի հաղթելու՝ 2021 թ. հաջողությունը կրկնելու հնարավորությունները ներկայում բարձր են: «Այնուամենայնիվ, պետք է հասկանալ, որ Հայաստանում բոլոր սոցիոլոգիական հարցումների արդյունքների հիման վրա՝ ընտրելու իրավունք ունեցող բնակչության մոտ 60%-ը դեռ չի որոշել, թե ում է քվեարկելու, եւ չի վստահում բոլոր քաղաքական կուսակցություններին»,- նշել է նա: Խոսելով Ռուսաստանի կողմից Փաշինյանի հաղթանակը կանխելու հնարավոր գործողությունների մասին՝ փորձագետն ասել է, որ Ռուսաստանը, օգտագործելով Մոլդովայում ընտրություններին միջամտելու մեխանիզմները, գործիքները եւ մեթոդաբանությունը, նախապատրաստական աշխատանքներ է իրականացնում Հայաստանում՝ «ստեղծում է ենթակառուցվածքներ եւ ցանցային կապեր՝ նախընտրական շրջանում աղմուկ բարձրացնելու համար, կազմակերպում է մարդասիրական օգնության բաշխում եւ տասնյակ ոչ կառավարական կազմակերպությունների բացում»: «Ռուսաստանի համար կարեւոր է, որ Փաշինյանի կուսակցության հետ միասին խորհրդարան մտնեն առնվազն 3 ռուսամետ կուսակցություններ: Այդ դեպքում, նույնիսկ եթե Փաշինյանը հաղթի, նրանք հնարավորություն կունենան ձեւավորել կոալիցիոն կառավարություն՝ շրջանցելով Փաշինյանի կուսակցությունը, այլ կերպ ասած՝ կրկնելով Գյումրիի սցենարը»,- ասել է Մամեդովը: Ինչ վերաբերում է ՀՀ վարչապետի առջեւ ծառացած դժվարություններին, փորձագետը նշել է. «Փաշինյանը հիմնականում բախվում է ներքին մարտահրավերների, որոնք բխում են իր գործողություններից եւ ռուսամետ ընդդիմության, սփյուռքի եւ եկեղեցու դեմ միաժամանակյա ճակատների բացումից»:

Արտաքին ճակատում, Մամեդովի կարծիքով, Ադրբեջանի հետ խաղաղության շուրջ համաձայնության գալուց հետո «կարելի է ասել, որ Փաշինյանն ավելի անկախ է դարձել, իսկ Հայաստանն ինքը՝ ավելի ինքնիշխան: Եվ այս առումով արտաքին սպառնալիքները նվազագույնի են հասցվել»: Ադրբեջանական քարոզչամեքենայի «խոսափողը» այլ հարցերից էլ է խոսում. «Եկեղեցու, ավելի ճիշտ՝ կաթողիկոսի հետ հակամարտությունը թափ է հավաքում: Փաշինյանն այս հարցում ամուր դիրք է գրավում, քանի որ Հայաստանի վարչապետի՝ կաթողիկոսին եւ բարձրաստիճան հոգեւորականներին վարկաբեկող բոլոր տեղեկությունները ճշմարիտ են: Այս առումով նա բավականաչափ ժամանակ ունի՝ Եկեղեցու հետ այս պայքարը մղելու եւ կաթողիկոսի ու հոգեւորականության բացասական ազդեցությունն իր վարկանիշի վրա մեղմելու համար»: Խոսելով հայաստանյան ընդդիմության մասին, որը, ըստ նրա, բաժանված է արեւմտամետ եւ ռուսամետ ուժերի միջեւ, Մամեդովը նշել է. «Հայաստանի գլխավոր ընդդիմությունը նույնպես ռուսամետ է, ուստի Փաշինյանի դիրքորոշումն այնպիսին է, որ նա համատեղում է եւ արեւմտամետ տրամադրությունները, եւ խաղաղության օրակարգը»: «Երեք հիմնական տարրերը, որոնց վրա նա կառուցում է իր ընտրարշավը,՝ խաղաղության օրակարգը, արեւմտամետ ուղին եւ կոռուպցիայի դեմ պայքարն են: Մենք գրեթե ամեն օր լսում ենք, որ Հայաստանի կոռուպցիայի դեմ պայքարի կոմիտեն «ունեզրկում է» որեւէ նախկին պաշտոնյայի կամ օլիգարխի, եւ այս ամենը լրատվամիջոցներում ներկայացվում է որպես կոռուպցիայի դեմ պայքարի մի մաս»:

Քաղաքագետը քննարկել է նաեւ Բաքվի գործողությունները Փաշինյանի պարտության դեպքում: «Հայաստանում ԱԺ ընտրությունները կարեւոր են Ադրբեջանի համար՝ վերջապես հասկանալու, թե ինչ է մտածում հայ հասարակությունը խաղաղության եւ Ադրբեջանի հետ հարաբերությունների մասին... Եթե Փաշինյանը ձախողվի ընտրություններում, կստեղծվի մի իրավիճակ, որը կստիպի Ադրբեջանին՝ գործել ստեղծված իրավիճակին եւ դրա արդյունքում ի հայտ եկող ռիսկերին, սպառնալիքներին ու հնարավորություններին համապատասխան»,- եզրափակել է Մամեդովը:

Արա ԱԼՈՅԱՆ

ՀԱՅԱՁԳԻ ՄԱՐԶԻԿՆԵՐԸ՝ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ. ՄԱՍ 3-ՐԴ

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Զմյուռնիայում հայ մարզիկները սկզբում հանդես են եկել հունական «Պելոպս» թիմի կազմում, քանի որ սեփական թիմով հանդես գալու հնարավորություն չեն ունեցել: Հետո ստեղծվել են «Քնար», «Վասպուրական», «Սահակյան» ակումբները, Ֆուտբոլիստների միությունը, որը քաղաքի առաջին հայկական ֆուտբոլային թիմն էր: Չորս ակումբ միավորվում է Հայկական որսորդական ակումբի կազմում, որը 1912-ին ուներ պաշտոնապես գրանցված 600 անդամ եւ մոտ 1000 գրանցված մասնակից: Մարզիկ Մկրտիչ Յանգյանի ջանքերով ակումբը զգալի հաջողությունների է հասնում: 1911-12 թթ. զմյուռնահայության թիմը հաղթել է հունական «Պելոպս» եւ «Ապոլոն», «Պանիոնոս», անգլիական «Բուրնաբադ» թիմերին: 12-ի մարտին հայերը նվաճում են Զմյուռնիայի արծաթե գավաթը: Գրիգոր Չոլոյանը՝ հայկական սպորտի տարեգիրը գրել է, որ այդ հաղթանակը հզոր բարոյական խթան էր հայ համայնքի համար. «Նույնիսկ կասկածամիտները եւ անտարբերները զգացին հայկական աննկուն ոգու ուժը»:

Մարզական կյանքը տարածվում էր ողջ Օսմանյան կայսրությունով: Էրզրումում լողն ու գեղասահքն էին ամուր հիմքերի վրա: Պահպանվել են Սանասարյան վարժարանի ուսանողների ցուցադրական մրցելույթների մասին պատմող լուսանկարներ: Նրանց ավարտական վկայականներում հատուկ նշվում էր նաեւ վերջիններիս մարզական նվաճումների մասին: Սեբաստիայում, տեղի Կենտրոնական վարժարանին կից գործում էր «Վանք» ակումբը: Կեսարիայում, Խարբերդում, Վանում, Կարսում, Տրապիզոնում, Ադաբազարում, Քյոթահիայում ձեւավորվում էին մարզական միություններ եւ խմբակներ: Սամսունում գործում էր «Արծիվ» ակումբը, որն այնքան է տպավորիչ եղել, որ տեղի թուրք բնակչությունը դիմել է ակումբի հայ մարզչին՝ խնդրելով նմանատիպ միջոցառում կազմակերպել նաեւ թուրք երիտասարդության համար:

Կիլիկիայում էլ, չնայած 1909 թ. արյունալի կոտորածներին, մարզական կյանքը թափ էր հավաքում: Կիլիկիահայությունը սկսում է գիտակցել ինքնապաշտպանության կարեւորությունը եւ ըստ այդմ՝ ֆիզպատրաստվածության կարեւորությունը: Չորք-Մարզպանում, տեղի Կենտրոնական հայկական վարժարանին կից գործում էին «Սիսվան», «Հեթում», «Լեւոն», «Ռուբեն» ֆուտբոլային թիմերը: Ադանայում եւ Իսքենդերունում կանոնավոր անցկացվում էին ցուցադրական մարզական միջոցառումներ: 1914 թ. ապրիլին, իր հերոսական ինքնապաշտպանությամբ հայտնի դարձած Չորք-Մարզպանում տեղի են ունենում Կիլիկյական Օլիմպիական խաղերը: Հազարավոր հանդիսականներ, ներառյալ նաեւ մոտ 40 թուրք սպա, հետեւում էին խաղերին: Ֆուտբոլային հանդիպում, վազքի, թռիչք երկարության մրցումներ՝ Ալեքսանդրետի, Ադանայի, Քելեկյան որբանոցի ու Չորք Մարզպանի թիմերի միջեւ: Կենտրոնական վարժարանի սաների ցուցադրած շվեդական վարժությունները մեծ տպավորություն գործեցին հանդիսականների վրա: Մասնակիցները ստացան հատուկ մեդալներ՝ «Կիլիկյան օլիմպիական խաղեր. 1914 թվական Չորք Մարզպան» մակագրությամբ:

Օսմանյան կայսրությունում այդ ժամանակներում հայ կանայք եւս ներգրավված էին մարզական կյանքին, թեեւ մահմեդական հասարակության մեջ դա դյուրին չէր: 1908 թ. երիտթուրքական հեղափոխությունից հետո հայուհիներին թույլատրվեց զբաղվել սպորտով: Սկզբում նրանք հանդես էին գալիս միայն ցուցադրական միջոցառումների եւ օլիմպիական խաղերի ժամանակ, օգնում էին բացման եւ մրցանակաբաշխության արարողություններում: Կանանց մասնակցության գաղափարն ակտիվորեն առաջ էր մղում Շավարշ Քրիսյանը: «Մարմնամարզում» հրապարակած իր հոդվածներում նա եւ այլ հեղինակներ գրում էին, որ առողջ կինը նաեւ առողջ մայր է, իսկ դա առողջ սերունդ ունենալու երաշխիք է: Քրիսյանը ստեղծել է Ստամբուլում «Եսայան միությունը», որն արեւմտահայկական իրականության մեջ առաջին կանանց մարզական ակումբն էր: 1912-ին Ուսքյուդար շրջանում ստեղծվում է «Իզի» («Առողջություն») ակումբը, որի նախաձեռնողները կանայք էին: 1913-ին Նիկողոսյան վարժարանի շրջանավարտները ստեղծում են «Երանդ» ակումբը, որն ուներ 60 կին անդամ: Սիվրիհիսարում գործում էր «Զավարյան» կանանց մարզական միությունը:

1913-ին առաջին անգամ հայ մարզուհիները մասնակցում են Հայկական օլիմպիական խաղերին: Իսկ 1911-ին ստեղծվում է առաջին մարզական պարբերականը՝ «Մարմնամարզը»: Այն ողջ Օսմանյան կայսրությունում առաջին սպորտային պարբերականն էր: Հիմնադիրը եւ խմբագիրը Շավարշ Քրիսյանն էր: Պարբերականն իր առաջ խնդիր էր դրել պրոպագանդել սպորտը, տեղեկացնել մարզումների եւ մրցումների մասին, կոորդինացնել ակումբների գործունեությունը, ստեղծել համահայկական սպորտային ֆեդերացիա: Քրիսյանն իր համակուրսեցի Գրիգոր Հակոբյանի միջոցով, որն ապագայում պետք է դառնար հայկական սկաուտական շարժման առաջնորդը, նամակագրական կապ է հաստատում փարիզյան Ժանսոն լիցեյի ղեկավար պրոֆեսոր Դեբոնեի հետ, որի ֆիզդաստիարակչական մեթոդները համարվում էին առաջավոր: 1906-ին նա մեկնում է Փարիզ, որպեսզի Դեբոնեի մեթոդներն անմիջականորեն ուսումնասիրի: Հետո 3.5 տարի անցկացնում է Լոնդոնում՝ աշխատելով եւ զբաղվելով սպորտով: Այն ժամանակների Անգլիան համարվում էր սպորտային տերություն: Անգլիայում Քրիսյանը տեսնում է, թե ինչպես կարելի է սպորտային մասշտաբային ձեռնարկներ կազմակերպել ու իրականացնել, ինչպես է սպորտը թափանցում հասարակության ամենօրյա կյանք ու կենցաղ:

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՋՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ

Բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

Հրապարակ
Գլխավոր խմբագիր Արմինե Օհանյան
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 7.11.2025թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

ԹՐԱՄՓԸ ՏՎԱԾ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ԱՌԵՐԵՍՎԵՑ

Bunin & Co տելեգրամյան ալիք

Մի քանի տարի առաջ Նահանգներում դեմոկրատները հաղթեցին Նյու Յորքում, Նյու Ջերսիում եւ Վիրջինիայում տեղի ունեցած ընտրություններում: Հիմնական ուշադրությունը, սակայն, ամերիկյան մեդիայում սեւեռված էր Նյու Յորքի վրա: Պատճառը թերեւս այն էր, որ Թրամփը, լինելով հանրապետական, կոչ էր արել քվեարկել դեմոկրատ թեկնածու Էնդրյու Կուոմոյի օգտին, սակայն ընտրվեց Զոհրան Մամդանին: Կուոմոն անկախ թեկնածու էր եւ առաջադրման պրայմերիզներում պարտություն կրեց: Թրամփն արդեն հասցրել էր Մամդանիին անվանել Կոմունիստական կուսակցության թեկնածու եւ սպառնացել էր, որ նրա հաղթանակի դեպքում Նյու Յորքի ֆինանսավորումը կկրճատի մինչեւ «նվազագույն անհրաժեշտ սահմանաչափը»:

Հընթացս նաեւ քննադատել էր հարազատ Հանրապետական կուսակցության թեկնածու Քերթիս Սլիվային, որն այդպես էլ ընտրապայքարից դուրս չեկավ՝ հանուն Կուոմոյի: Ընտրությունների արդյունքները, սակայն, ցույց տվեցին, որ նույնիսկ եթե Սլիվան հաներ թեկնածությունը, Մամդանին, միեւնույն է, կհաղթեր: Միափուլ ընտրություններում Մամդանին հավաքեց 50,4 տոկոս քվե, Կուոմոն՝ 41,6 տոկոս, Սլիվան՝ 7,1: Մասնակցությունը ռեկորդային էր՝ 2 միլիոն ընտրող: 2021 թվականի ընտրություններին 1,1 միլիոն ընտրող էր մասնակցել: Մամդանին դարձավ Նյու Յորքի առաջին քաղաքապետը, որը 1969-ից ի վեր ավելի քան 1 միլիոն քվե էր հավաքել: Նրա թիմը կարողացել էր համախմբել երիտասարդ ընտրողներին, որոնք փոփոխություններ են ցանկանում: Նրա կամավորները «դռնեդուռի» սկզբունքն էին ընտրել՝ համոզելով քաղաքացիներին, որ անհրաժեշտ է հնարավորություն տալ երիտասարդ ձախական քաղաքական գործչին, որը քննադատում է վերնախավերին:

«Մենք գահընկեց արեցինք քաղաքական դինաստիային»,- ընտրություններից հետո հայտարարեց Մամդանին՝ նկատի ունենալով Կուոմոյին: Այն, որ Մամդանին ձախական հայացքներ ունի, հնարավորություն է տալիս, որ հանրապետականները դեմոկրատներին մեղադրեն ձախ արմատականությանը եւ կոմունիզմին հարելու մեջ: Սակայն զուգահեռաբար տեղի ունեցած Վիրջինիայի եւ Նյու Ջերսիի ընտրություններում հաղթած դեմոկրատներին դժվար թե հնարավոր լինի ձախական համարել: Այստեղ հաղթեցին չափավորական, կենտրոնամետ թեկնածուները: Առավել հետաքրքիրը Վիրջինիայում էր, որտեղ գործող նահանգապետը հանրապետական էր: Փաստորեն, պատկերավոր ասած՝ Վիրջինիան «կարմիր» նահանգից դառնում է «կապույտ»: Այստեղ նաեւ փոխնահանգապետ, գլխավոր դատախազ եւ տեղական օրենսդիր մարմնի պատգամավորներ են ընտրել: Բոլոր մակարդակներում հաղթել են դեմոկրատները: Հանրապետականների պարտությունը կարելի է բավական ծանր համարել, որ Դեմոկրատական կուսակցության թեկնածու Ջեյ Ջոնսը մի քանի սկանդալներում հայտնված անձ էր: Սակայն նույնիսկ նրան հանրապետականները հաղթել չկարողացան: Ջոնսը հավաքեց 52,2 տոկոս քվե՝ միայն այն բանի համար, որ Թրամփի քաղաքական հակառակորդն է: Առհասարակ, դեմոկրատների ընտրարշավն ընթացավ հակաթրամփական կարգախոսների ներքո: Հանրապետականները փորձեցին ընտրողների ուշադրությունը կենտրոնացնել տեղական օրակարգի վրա՝ ամեն կերպ ձգտելով իրենց հեռու պահել նախագահի հետ նույնականացումից, որի պոպուլյարությունը նվազում է: Հանրապետականների հույսը հիմա այն է, որ Մամդանիի ձախական հայացքները կհեղինակազրկեն Դեմոկրատական կուսակցությանը՝ չափավոր հայացքներով ընտրողների աչքում: Երիտասարդ դեմոկրատները, ի դեպ, համառորեն պնդում են, որ կուսակցական ծեր վերնախավը հեռանա ասպարեզից, եւ ավելի արմատական թեկնածուներն առաջ գան: Կուսակցությունում, ընդհանուր առմամբ, ձախականությունը սկսել է «նորաձեւ» դառնալ: Դա են վկայում նաեւ սոցհարցումները: Դեմոկրատների 66 տոկոսը դրական է վերաբերվում «սոցիալիզմին»: Կապիտալիզմի հանդեպ դրական վերաբերմունք ունի 42 տոկոսը: Համաամերիկյան մակարդակում կապիտալիզմին կողմնակից է ամերիկացիների 54 տոկոսը: 2010-ին այդ ցուցանիշը 61 տոկոս էր:

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am